



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20634

ՄԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՓԵՋԻԿ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՏԱՐԻ

ԴԱՅԵՐԷՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆՑ

ԶԱՐԴԱՐՈՒԱԾ ԲԱԶՄԱԹԻԻ ՍԻՐՈՒՆ ՊԱՏԿԵՐՕՔ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معرف نظارت جلیلهی و مطبوعات اداره جلیلهی - خضیبه طبع و نشر الوحدیه

۴۷ ساله

Կ. ՊՈԼԷՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

Թիւ 20 Չագմաքձըլար

1902

891.99(082)  
Գ-13

Ս Ի Մ Ո Ն Գ Ա Բ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն

891.99 (082)

Գ-13

42

Փ Ն Ջ Ի Կ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՀԱՒԱՔԱԾՈՅ

ԿԱՄ

ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՏԱՐԻ

ՀԱՅԵՐԷՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆՑ

Հարդարուած թագնարիւ սիրուն պատկերօք

ՀԵՏԵՆՈՂՈՒԹԵԱՄԸ

ՄՕԱՅԻ « ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԻ » ԴԱՍԱԳՐՔԻՆ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Բացի արձակ և ոտանաւոր հատուածներէ՝ նիւթոց ամփոփումներ, Բարոյականներ, Առածներ, Բերականական հրահանգներ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



2003

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԱՏՔԷՈՍԵԱՆ

1902

30651-4.2

ՅՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՑՈՒՆ, ԿԱԶՄԱՑՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՑԹԷՈՍԵԱՆ

27, Ֆինանսնըլար եօզուշու, Կ. Պոլիս



(3067-48)

13407-58

معارف نظارت چاپخانه و مطبوعات اداره بیه سی و خصتیه  
طبع اولمشدر فی ۴ نیسان ۳۱۷

Յ Ս Ռ Ս Ջ Ա Բ Ա Ն

Ա. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Իրաւացի գանգաս մ'ե քե ինչո՞ւ Տանկահայք իրենց դասագրքերով գրական հրապարակը կ'ողողեն, մինչդեռ անդին ժողովուրդն ի գո՛ւր իւր գրասիրութեան յագուրդ մը կ'ակնկալէ օգտաւաս երկասիրութիւններէ :

Բայց եթէ բաւ համարինք մինչեւ ցարդ հրատարակուած դասագրքերն, սակայն անոնց մէջ չպիտի կրնանք գտնել պահանջուած կատարելութիւններով օժտեալ գործեր (բացի սակաւաթիւներէ), եւ պիտի փորձուինք նորէն դասագիրք յօրինել :

Մ'ըցում մ'ե այս եւ ամեն ոք իրաւունք ունի՝ առաջնորդ ունենալով ողջմտութիւնն՝ խստապահանջ ըլլալ հետզհետէ լոյս տեսած դասագրքերու մասին :

Ո՞վ չգիտէ Ֆրանսական արդի դասագրքերու մեծ մասին ունեցած ուժագրաւ ուղղութիւններն ու հանգամանքները :

Արդ ժամանակն հասած է որ ցուցնենք մեր հրատարակած դասագրքերուն մէջ լաւագունին հետեւելու ազնիւ շահնն եւ այսպէս անարգ շահախնդրութեան մը կեղծ ջնջենք մեր նակասներէն : Իցի՛ւ քե ժողովուրդն ալ չըսիտքեր աւագն ոսկիին հետ :

Ներկայ հրատարակութիւնս աշխարհաբար ՀԱՒԱ-  
ՔՍՄՈՅՆԵՐՈՒՍ նախնական տարին կը կազմէ . բազմա-  
քիւ Ֆրանսական այս տեսակ գրքերու մեջէն լաւագունին ,  
այսինքն Մօայի «Արտասանութեան Ա. տարւոյն» ծրագրին  
համեմատ պատրաստեցի , անոր պարունակած շատ մը  
մանկական քերթուածներ , առակներ հայացնելով եւ ա-  
նոնց յարմար պատկերներն յատկապէս փորագրել տալու  
փափակն յաջողեցայ ի գործ դնել ոչ նուազ զոհողու-  
թեամբ : Եւ գործս ընթերցման եւ արտասանութեան չոր  
ու ցամաք վարժութիւն մը ըլլալի աւելի բարոյականի  
կատարեալ ընթացք մ'է :

Ահա նոր դասագիրք մը՝ որ կը յուսայ մայրենի  
լեզուի ուսման կարեւոր օժանդակ մը լինել , եւ իբր  
այս՝ մտնել մեր ամեն վարժարանաց մեջ :

15 Յունիս 1894

Իւսկիւսար

Ս. Գ.



Ա. Ռ.

ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ Բ. ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԾՆՆԵԱՂ ԳՍՏՍՄՍՆԵԱՆ

ՀԵՂԻՆՍԿԵՆ



# Փ Ն Ջ Ի Կ

## Ի — Շ Ա՛ Յ Ր Ի Մ

ԲՈՒՄԱՆՆԵՐԵՆԻՆ : — ԱճԱՄ :  
 սիկ տղայ մը որ հասոյր կ'զգայ իբր  
 զգացումներն յայտնել իւր հօրը նկատ-  
 մամբ :



Թէ զիս տանին երկիր օտար ,  
 Թափեն առաջքս ազնիւ գոհար ,  
 Եւ պատրաստեն ինձ կեանք վրտեմ ,  
 Ես լոկ ծոցիկդ հանգչիլ կուզեմ ,  
 Հա՛յր իմ :

Թէ ձայն քաղցրիկ զարնէ սրտիս ,  
 Ըսէ , « Թո՛ղ հայրդ և սիրէ զիս ,  
 « Հրեշտակ մ'եմ վերէն իջած » .  
 Ես զայն մերժեմ բացէ ի բաց ,  
 Հա՛յր իմ :

Ես վանդակիդ փոքրիկ Թռչուն՝  
 Կ'երգեմ անունդ քաղցրահնչիւն .  
 Մաղթեմ օրեր շատ երջանիկ ,  
 Յանկամ քեզի ամէն բարիք ,  
 Հա՛յր իմ :

Թո՛ղ ընդերկար կենացդ արև  
 Փայլի պայծառ մեր տան վերև .  
 Վայելես կեանք ուրախ , անվիշտ .  
 Զաւակիդ մաղթանք այս է ընդմիշտ ,  
 Հա՛յր իմ :


**ՈՐՐՈՅԱԿԱՆ.** — Իրաւունք ունիս , տղան , սիրէ հայրդ քու բոլոր  
 սրտովդ : Բայց բաւական չէ միայն ըսել թէ կը սիրեմ հայրս : Պէտք է գոն  
 ընել զանի բարի , հնազանդ , աշխատասէր ըլլալով :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Որոշեցէք միավանկ , երկավանկ և բազմավանկ  
 քառերն սոյն հատուածին , զոր օր . քե , միավանկ քառ . ե , զիս , միա-  
 վանկ քառ . ե , Տանիկ , երկավանկ ե :

**ԱՌԱՄ.** — Իր ընտանիքը սիրողն ապահով է քե պատկեշտ մտդ  
 մը կըլլայ :

## 2. — ՄԱՄՈՒԿՆ ԵՒ ՇԵՐԱՄԸ

**ՌՈՎԱՆՊԱԿՈՒԹՈՒՆ.** — Մամուկը  
 կը պարծենայ թէ ինք շատ շուտ կը  
 գործէ իր կտաւը , և կը ծաղրէ զըն-  
 րամն , որովհետև սա շատ կամաց կ'աշ-  
 խատի : Շերամը կը պատասխանէ ա-  
 նոր , « Ի՞նչ բանածոյ բանի մը օգուտ  
 չունի , մինչդեռ իմինովս գեղեցիկ կեր-  
 պաններ կը շինուին » :



Մամուկը ծաղրէր շերամըն այսպէս .

« Թէ շատ դանդաղ ես , ժամ կորսընցնես ,  
 « Ես քիչ մ'ատեն աշխատելով ,  
 « Զարդարեմ պատն անթիւ թելով » :  
 — « Աղէ՛կ , կ'ըսէ , որդնիկն անոր .  
 « Բայց քու բանածըդ լինչ է որ ,  
 « Մինչդեռ իմ գործս է շահեկան ,  
 « Ի՞նչ կը գործեմ , աղի՛կ սակայն » :

Լ. Բայի

**ՌՐՐՈՅԱԿԱՆ.** — Երկու եղբայրներ , Պօղոս և Պետրոս իրենց պարտա-  
 կանութիւնները կը կատարեն : Պօղոս անսպարանօք գրիչ կը շարժէ և քիչ  
 ատենի մէջ թուղթը կը լեցընէ , և կը ծաղրէ զՊետրոս , որ տակաւին չէ  
 ըննցուցած , որովհետև կամաց կ'աշխատի : — Այն , բայց վաղն ուսուցիչը  
 պիտի ըսէ . « Պօղոս , այս պարտականութիւնը գէշ է . պէտք է զայն նո-  
 րէն սկսիլ : Պետրոս , այս պարտականութիւնն աղէկ է . լաւ նիշ մը պիտի  
 ունենաս » :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Հետեւեալները հասարակ գոյականներ են , զոր օր-  
 մամուկ , շերամ , ժամ , պատ , քել , գործ , կլն :

**ԱՌԱՄ.** — Գործաւորն իր գործէն կը դասուի :

### 3. — Հ Ա Ճ Ա Ր Ի Ն



**ՌՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Տղայ մը անտառակի մը մէջ կը խաղար. իր ձեռքը կը հանդիպի հաճարիի ճիւղի մը, որ զանի կը խոցէ: Լալով կուգայ իր հօրը պատմելու այս դժբախտութիւնը: Հայրն ասկէ խոհեմութեան դաս մը կը հանէ իր տղուն համար:

Փշալից հաճարին խոցեց մի մանկիկ,  
Որ լալով իւր հօրն պատմեց այս չարիք.  
— «Այս անիծած թուփն, սլաքներով անեղ,  
« Ինչո՞ւ մեր պարտէզն ունենար իր տեղ,  
« Խոցե՛լ անցորդներ, ի՛նչ օգուտ սակայն »:  
— «Մեզ կը պատուիրէ ըլլալ խոհական:  
« Եւ կը հաստատէ այս դործքով յայտնի,  
« Թէ միշտ չարերէն պէտք է մնալ հեռի »:

**ՐԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Հաճարիները անտառներու մէջ կը խառնուին անվնաս ծառերու հետ. այսպէս աշխարհի մէջ ալ չարերը բարիներուն հետ կը խառնուին յաճախ: Եթէ չէք ուզեր որ չարերը ձեզի վնասեն, խոհեմ եղէք: Ձեր չնանցած մտադոց հետ մի՛ բարեկամանա՛ք եւ մի՛ վստահի՛ք անոնց:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ո՞րն է ածական և ո՞րն է գոյական հետեւեալ բառերէն. — Փշալից հաճարին, անիծած բուփ, անեղ սլաքներով, յայտնի գործով:

**ԱՌԱՐՅՆԵՐ.** — Ըսէ՛ր քե որո՞ւ կը յաճախես եւ ես պիտի ըսեմ քե ո՞վ ես:

Հրանունկը օր մը շահո՛քրա՛մի՛ն հետ կապուցաւ: Հետեւեալ օրը

հրանունկը շահո՛քրա՛մի՛ն հետ առաւ: Մտոյ քարձնեալն ընկերութեանն սխալն կ'օգտի:

**ՐԱՌՔ.** — Հաճարին թուփ մ'է, որուն տերեւները կը խաթեն: Տճ (Տէ՛րե՛լէ՛ր քէ՛քէ՛ր):

### 4. — Ծ Ո Յ Լ Ը

**ՐՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Կիրակի է. Պետրոս կ'ելնէ, դաս մը ունի պատրաստելու երկուշաբթի առտուան համար: Պատմութեան զանգուարան կողմը այն է որ Պետրոս նախ կ'ըսէ. կէս օրէն վերջ կը պատրաստեմ. յետոյ, ո՞չ երեկոյին, ո՞չ ճաշէն վերջ, ո՞չ վաղն առտու կը պատրաստէ: Եւ դասը չը կրնար պատրաստել, և Պետրոս կը պատժուի:



Կ'ըսէր Պետրոս. «Նախ ըզբօսանք,  
Յետոյ իրկուն դաս կը կարգանք»:  
Երեկոյին կը յօրանջէ,  
Կը ննջէ:

Բայց կ'ըսէ իր դասին համար.  
«Պատրաստեմ վաղն ես իմ համար»:  
Սակայն առտուն մայրը ձայն տայ,  
Երբ նա խորունկ քընով խորդայ:  
Եւ դասին մէջ կը պատժուի.  
Պէտք չէ՞ պատժել տղայ մ'այսպիսի:  
Իսկ ես խենդ չեմ նըման անոր.  
Կը պատրաստեմ դաս ամէն օր:



Ո՛վ որ վաղուան կը թողու միշտ ,  
Պիտի գտնէ չարիք և վիշտ :

**ԲԱՐՈՅԱՎԱՆ.** — Պետրոս յիմար մ'է, նա իր կիրակին ի զո՛ւր կ'անցունէ. ամբողջ օրը կը խաղայ, կը ճաշէ, կը պառկի և ձանձրանալով կ'ըսէ ինքնիրեն. «Եւ տակաւին դաս չեմ պատրաստեր»։ Տղամ, կ'ուզես դուն զբօսնուլ բան թէ դասդ պատրաստել։ Ո՛հ, նախ և առաջ դասը պատրաստել պէտք է։ Այն ատեն միտքդ կը հանդարտի և դու հանգիստ սրտով պիտի խաղաս։ Որչափ գործ մը յեռաձգես, այնչափ կը դժուարանայ։

**ՀՐԱՀԱՆԳ.** — Պետրոս ինչ տեսակ բառ ե. յիշեցիք այդպէս բառեր։

**ՍՌԱՆԻ.** — Ժամանակը դրամի պէս ե. մի՛ կորուսաներ զայն, ևչ բառական կ'ունենաս։

### 5. — Ծ Ն Ն Դ Ա Վ Ա Յ Ր Ի Ս Է Ր



**ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ.** — Ձեր տարիքն ունեցող տղայ մը ձեզի պէս կը սիրէ իր ծնած երկիրը, և կ'ըսէ թէ երբոր մեծնայ՝ իր հօրը մօրը օգտակար պիտի ըլլայ։

Ես տակաւին տղայ մ'եմ, բայց բոլոր սրտովս կը սիրեմ ծնած տեղս։ Ես հոն ծնած եմ, հոն մեծցած եմ. երջանիկ եղած եմ ուսուցիչներուս դասերով, իմ սիրած ընկերներովս։ Հոն կ'ուզեմ բնակիլ։ Ես զանի միշտ պի-

տի յիշեմ և երբ մեծնամ, պիտի աշխատիմ հօրս ու մօրս օգտակար ըլլալու։

**ԲԱՐՈՅԱՎԱՆ.** — Մարդ իր երկրին օգտակար ըլլալու համար միթէ հանրէ է որ մեծ պաշտօններ ունենայ։ Ո՛չ, թող աշխատասէր մէկն ըլլայ. այդ բառ է։

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ես ինչ տեսակ բառ ե. նոյնպէս դու, ես, մենք, դուք, անոնք, այս, այդ, այն, ասիկա, ատիկա, անիկա։

### 6. — Խ Ա Յ Տ Ի Տ Ը Ե Ի Ա Ն Ծ Ե Ղ Ը

**ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ.** — Անծեղ մը կ'ըսէ խայտիտին, «Ինձ երգել սորվեցուր»։ — Բայց խայտիտը կը ծաղրէ զանի. «Դ՛հն, կ'ըսէ, դուն կարող չես բան մը սորվելու»։ Թէ ինչհու, ահա այս առակէն կ'իմանար։



«Սորվեցու՛ր ինձ քաղցր գեղգեղ» .  
Այսպէս կ'ըսէր շառխօս անծեղ՝  
Սիրուն, զուարթ այն խայտիտին  
Որ գարնան կ'երգէր մէջ անտառակին :  
— «Դիտեմ, հոգի՛ս, կատակ կ'ընես ,  
«Բայց քու ցեղդ, գրաւ կը դնեմ ես ,  
«Բան չը սորվիր մինչ յաւիտեան» :  
— «Ինչո՞ւ արդեօք, իմ սիրական» :  
— Երգելու համար երգեր շատ անուշ ,

Պէտք էր նախ գիտնալ աղէկ դնել ուշ » :  
Եւ շատախօսն չգլխուր այս բան :

**ՌԱՐՈՅԱԿԱՆ.** — Ո՛հ, այս անձեղը երբեք բան մը չպիտի սորվի, որովհետեւ անդադար կը ցատկըտէ, աչ և ձախ կը նայի, ափեղցփեղ կը խօսի: Եատ տղայքներ այս անձեղին կը նմանին: Դասի ատեն ուսուցչին մտիկ ընելու տեղ շատախօսութիւն կ'ընեն. տան մէջ, ամէն տեղ ոչինչ բաներ ըսելու համար կը շատախօսեն, փոխանակ փորձառու մարդոց մտիկ ընելու: Եատախօսները իրենցմով զոն կ'ըլլան. կը կարծեն թէ շնորհալի կը համարուին: Տղէտ և անմիտ կը մնան և ամէն ոք զանոնք կը ծաղրէ:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ ըսել և գեղգեղ, գիտէք ուրիշ բառեր՝ որ երգ նշանակեն:

**ԱՌԱՍԻ.** — Բնութիւնը մարդուն տուած է երկու ականջ և մեկ բերան, որպէս զի ստիպի թէ պէտք է շատ մտիկ ընել և քիչ խօսիլ:

**ՌԱՌ.Բ.** — Դեղզեղ, եւէ. — ուշ դնել, Գրտ Գրտել:

7. — Ս. ԳՐԻԳՈՐ

**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Տղայքներ, Ս. Գրիգոր իր պղտիկութեան ատեն ալ սովորական տղայ մը չէր. երբոր մեծնար և իր կեանքը սորվիք, աշխատեցէք անոր բարի զաւակներն ըլլալու:

Ծնաւ Ս. Գրիգոր 257 թուականին. հայրն էր Անակ, և մայրը կը կոչուէր Ոգոհէ: Եւթազ անուանով մէկը Անակին երեք տարեկան զաւակը Կեսարիա փախուցուց իր Սովիա ստնտուլին հետ: Այն տեղ մանուկը

մկրտելով՝ Գրիգոր անուանուեցաւ և մեծցաւ քրիստոնէական հոգւով, սորվելով Յունարէն և Սարերէն լեզուները, նոյնպէս կրօնքի վերաբերեալ գիտութիւններ: Երբ չափահաս եղաւ, ամուսնացաւ Դաւիթ անունով յոյնի մը Մարիամ աղջկան հետ, որմէ ունեցաւ երկու որդի, Վրթանէս և Արիստակէս: Երեք տարիէն ետքը երկու ամուսինները փոխադարձ համաձայնութեամբ բաժնուեցան մէկմէկէ: Մարիամը իր պղտիկ տղուն հետ կուսանոց մտաւ, իսկ Գրիգոր Վրթանէսը դայեակներու յանձնելով՝ ինք զնաց ծառայութեան մտաւ:

**ՌԱՐՈՅԱԿԱՆ.** — Բարի հայր մ'է Ս. Գրիգոր. անոր կեանքին ամենէն նշանաւոր դէպքերն են այն ամէն տառապանքներն՝ որոնք եկեղեցւոյն համար կրնց, Տղայքներ, մտքերնիդ պահեցէք այսպիսի հօր մը յիշատակը:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ կը ցուցնեն 275, նրեք, երկու և ասոնց պէս բառեր:

8. — ՄԱՏԱԿ ԿԱՊԻԿԸ, ԿԱՊԻԿՆ ԵՒ ԸՆԿՈՅՁՆ

**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Մատակ կապիկ մը ընկոյզ մը կը խածնէ առանց անոր կեղեւը հանելու: « Ի՛նչ գէշ է » կ'ըսէ նա. և ընկոյզը կը նետէ: Կապիկ մը զայն կը ճաշակէ և այն յիմարին աղէկ դաս մը կուտայ:

Կապիկ մը մատակ առաւ հապճեպով  
Ընկոյզ մը փակուած կանանչ կըճեպով:  
Խածաւ զանի, խոտոռեց դէմքն. « Ա՛հ, իրաւ.

« Մայրըս ինծի շատ սուա , կ'ըսէ , խօսեցաւ :

« Երբ հաւտացուց թէ աղէկ են ընկոյզներ .

« Այսուհետեւ պէ՛տք է հաւատք ընծայել

« Ծերոց ամէն խօսքերուն

« Որ խարեն մեր մանկութիւն ,

« Կրողն ուտէ ասիկա » :

Եւ կը նետէ զայն ահա :

Բայց կապիկ մը կ'առնու շուտով

Կտարէ ընկոյզն երկու քարով ,

Կեղւելով կուտէ և կ'ըսէ . « Հոգի՛ս ,

« Իրաւունք ունի մայրդ , հաւտա՛ խօսքիս :

« Շատ համով են ընկոյզներ , պէ՛տք է բանալ միայն :

« Յիշէ՛ , յիշէ՛ միանգամայն

« Զիկայ երբեք հաճոյք առանց աշխատութեան » :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ** — Խոնարհութեամբ ընդունէ քեզմէ աւելի փորձառու անձերուն խրատները . աշխատութենէ մի քաշուիր , այլ սիրէ զայն Ասով պիտի վարձատրուիս դուն : Ուսանողին համար հաճոյք մ'է վկայագիր ընդունիլ , բայց զայն ընդունելու համար պէտք է աշխատիլ :

**ԲԱՌԲ.** — Հապճեպով , « հարաւան » . — կճեպ , կէլ . — կղեւեկ , կէլ-ը հանէ :

**ԱՌԱՄ.** — Աշխատութիւնը գանձ մըն է :



Գ. — ԳՈՂԵՐ ԵՒ ԷՇ

13407-58  
(3027-48)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ** . — Երկու ստահակներ , էջ մը գողցան : Տեսէք թէ ինչ շահ կը հանեն անոնք իրենց գողօնէն :



Երկու գողի գողցած էջըն կըռիւ յուզէր .  
Մին զայն պահել , միւսըն զանի ծախել կ'ուզէր .  
Ասոնք երբոր խիստ բարկացած՝  
Կ'իջեցնէին սաստիկ հարուած ,  
Երբորդ գող մը հասաւ արագ  
Քակեց տարաւ մեր աւանակ :

**ԼԱՃՈՅՔԷՑ**

**ԲՈՐՈՅԱԿԱՆ** . — Երբոր անոնք զիրար կը հարուածէին , ուրիշ ստահակ մը անոնց էջը գողցաւ . Շատ աղէկ . — Երբ երկու պարկեշտ մարդիկ ի միասին կ'աշխատին , իրենց շահը բաժնելու համար իրարու խօսք կը հասկընան . — Բայց այնպէս չէ գողերու համար . գողութեան մէջ կը միարանին , բայց գողցուածը բաժնելու համար թշնամի կ'ըլլան , և կուտելով շահածնին կը կորսնցնեն :

**ՀՐԱՀԱՆԳ** . — Ի՞նչ հողով են , գողի , էջն , կուխ , մին , զայն , ատներ , հարուած , գող , աւանակ :

**ԱՌԱՄ.** - Չարերն երկար ասեն չեն մնար հաւսածայն :



10. — Խ Ի Ղ Ճ Ը

**ԲՈՎԱՆՆԻՆՆԵՐԻՆՆԵՐ.** — Ահա բարի տղու մը ըրած խորհրդածու-  
թիւնը . կ'ըսէ . կան գիշերներ , երբ զուարթ կ'ըլլամ , և ուրիշ գիշեր-  
ներ՝ տխուր , ինչո՞ւ է այս զանազանութիւնը : — Եւ այն ատեն կը հաս-  
կընայ թէ իր խիղճը կը պատճառէ այս զանազանութիւնը :

Ընդ միշտ ինքզինքս շատ գոհ կը զգամ , երբ լաւ  
կատարեմի իմ պարտքերս : Այն ատեն աւելի հաճոյքով  
սեղան կը նստիմ , կը վազեմ , կը ցատքեմ , կ'երգեմ : —  
Բայց եթէ ծոյլ եղած ըլլամ , կամ չար , հանգիստ չեմ  
ուշեմար , և ա՛լ հաճոյք չեմ զգար ուտելու կամ խա-  
ղալու : — Այն ատեն իմ խիղճս է որ զիս կը տանջէ ,  
որ ինձ կ'ըսէ թէ թերացած եմ պարտականութեանցս  
մէջ , և այսպէս ընելով աղէկ մէկը չպիտի ըլլամ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Զաւակս , միշտ մտիկ ըրէ այն ձայնին՝ որ քու  
հոգեոյ մէջ կը խօսի . Դու մայրդ կամ ուսուցիչդ չեն որ քեզ կը պատճեն  
և կամ կը վարձատրեն : Այլ նոյն իսկ դուն ես , քու խիղճդ : — Դուն  
ամէն մարդէ կրնաս պահել քու ըրած մէկ չար գործդ , բայց չես կրնար  
քու խղճէդ պահել զայն : Դու չես կրնար զայն լռեցնել . և այն քեզ  
պիտի պատճէ :

**ՀՐԱՆԱՆԳ.** — Ո՞րն է եզակի և ո՞րն՝ յոքնակի հետևեալ բառե-  
րեն , ինքզինքս , պարտքերս , հաճոյք , սեղան , հանգիստ , խիղճ ,  
պարտականութեանցս :

**ԱՌԱՄ.** — Մարդ գոհ կ'ըլլայ միայն իր պարտքը կատարելով :

11. — Ա Ն Ձ Ր Ե Ի Ո Տ Օ Ր Մ Ը

**ԲՈՎԱՆՆԻՆՆԵՐԻՆՆԵՐ.** — Արձակուրդի օր մ'է , բայց անձրեւ կու-  
գայ , կարելի չէ դուրս ելնել և ընկերներով խաղալ : Ի՞նչ պէտք է ընել :  
— Սահակ կը ձանձրանայ , մինչդեռ իր եղբայրը շատ կը զբօսնու : Ահա  
թէ ինչո՞ւ :

Անձրեւոտ օր չը սիրեր Սահակ ,  
Զգիտեր խաղալ նա միայնակ ,  
Երբ ծառին տակ կրնայ խաղալ խմբովին  
«Կը ձանձրանամ այս տեղ» , չըսեր բընաւին :

Սակայն մի օր յուշիս ամսուն  
Անձրեւ կուգար մինչ իրիկուն :  
Սահակ նեղուած եղբօր գընաց՝  
Որ կարդալու էր զբաղած .

«Ի՞նչպէս ժամանակն երեւի երկար ,  
«Եկո՛ւր որ խօսինք զբօսնելու համար .  
«Դու կը ձանձրանաս այդ տեղ մինակուէկ» :  
— «Շատ լաւ կ'ըբօսնում , չուշիմ ես տաղտուէկ» :

Պատասխանէ փոքրիկ Մարգար ,  
«Ես կը կարդամ գիրք մ'օգտակար» :  
Մարդ գիրքերով տաղտուէկ չգգար :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Բաց օդին պտըտիլ , ընկերներով խաղալ , լաւ :  
Բայց եթէ անձրեւ գայ , եթէ առանձին ըլլայ մարդ : — Եւ սակայն կան  
բարեկամներ՝ որոնք մինակ եղողներուն կ'ընկերակցին : Ատոնք զբերն  
են : Դրբերը քեզ կը խօսին , բան կը սորվեցնեն , անոնք քեզ կը  
պտըտցնեն հեռու երկիրներ . անոնք քեզի կենակից կ'ընեն անցած  
դարերու մարդոց . կը պատմեն զեղեցիկ պատմութիւններ՝ որոնք կը  
խնդացնեն կամ կը լացնեն : Այն որ կարդալ կը սիրէ՝ չձանձրանար  
երբեք :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ տեսակ բառեր են, խմբովին, բնախին, միայնակ, այդ տեղ, շատ լաւ :

**ՌԱՌՔ.** — Խմբովին, ի՞նչ-չ. — Տաղտուկ, չափազանց :

**ԱՌԱՄ.** — Պեսիկ կարգայ ուսնելու, ուղղուելու եւ սիրտուելու հարաւ :

## 12. — Ս Ա Լ Ո Ր Ե Ն Ի Ն



**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Պարտիզին մէջ մարդ չիկայ, Ո՞հ, այն գեղեցիկ պտուղները՝ որոնք սալորենիէն կախուած են, Յակոբիկ պիտի կրնար ուտել ուզածին շտի. ո՞վ պիտի գտնար : — Բայց Յակոբիկ աւելի կը սիրէ հնազանդիլ : Իր հնազանդութիւնը կը վարձատրուի :

Յակոբիկ որկրամովի աչքով կը նայէր սալորենիին՝ որ շատ հասուն աղուոր պտուղներով լեցուն էր : Շատ փափաքեցաւ անոնցմէ մէկ քանի հատ քաղել . բայց իր հայրը արգելած էր այդ բանն և ինքնիրեն կ'ըսէր . « Հոս մէկը չիկայ որ զիս տեսնէ, ոչ հայրս, ոչ պարտիզպանը, վերջապէս ոչ մէկը, և ես առանց մէկուն գիտնալուն պիտի կրնայի այս սալորներէն մէկ քանի հատ առնուլ, բայց կ'ուզեմ հնազանդ ըլլալ : Չեմ ուզեր որկրամուտիւնս գոհացնելու համար ինձ պատուիրուածը չպահել » : Եւ Յակոբ հեռանալու վրայ էր : Այն ատեն հայրն, որ ծառի մը ետեւէն մտիկ ըրած էր

անար, վաղեց անոր առջեւ և ըսաւ . « Եկո՛ւր, տղաս . հիմայ մէկտեղ քաղենք այն աղուոր սալորները » : Եւ հայրը սկսաւ ծառը թօթուել և Յակոբիկ տեսաւ որ իր բարի գործը առատապէս վարձատրուեցաւ :

**ԲԱՐՈՑԱԿԱՆ.** — Եթէ հայրը հոն եղած չըլլար, եթէ Յակոբիկ սալորներ ունեցած չըլլար, այսպէս պիտի վարձատրուէր : — Այն . ինչո՞վ, խղճմտանքին միջոցաւ, որ անոր պիտի ըսէր . « Աղէկ, դուն պարկեշտ տղայ մ'ես » :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Որկրամովին արմատն է որկոր, որ կը նշանակէ կոկորդ : Այն բառերն՝ որոնք երկու բառէ կը կազմուին, բարդ կ'ըսուին :

**ԱՌԱՄ.** — Հնազանդութիւնը մանկանց ամենեւնի քաղցր առաջինութիւնն է :

**ՌԱՌՔ.** — Որկրամով, շարժուի :

## 13. — Ա Ռ Ի Ի Ծ Ե Ի Մ Ո Ի Կ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Առիւծ մը մուկի մը կեանքն ազատած էր . ասի դիւրին բան մ'է առիւծին համար, բայց զարմանալին այն է որ նոյն մուկն ալ առիւծին կեանքն ազատեց :



Առհասարակ ամենուն  
Աշխատէ որ բարիք ընես .  
Դա ո՞վ, նա ո՞վ է՝ չըսես :

Ձեռքէդ որ դայ ոչ մէկուն  
 Պատուոյն , շահին փոքրիկ վընաս ,  
 Մազի թելով անգամ , չըտաս .  
 Ձի չըկարծած խեղճ թըշնամիդ  
 Գու կորըստեանդ կ'ըլլայ առիթ .  
 Ընդ հակառակն փոքրիկ երախտիք  
 Կը խափանեն մեծ մեծ չարիք :

Անտառին մէջ պըզտիկ Մուկիկ ,  
 Իր պոչն ըրած խաղալիկ ,  
 Գըլոր մըլոր ման կուգար .

Նա չէր գիտեր որ հոն պառկած  
 Առիւծն՝ անոյ ջրուն կ'ըլլար :

Նայիս՝ յանկարծ ,  
 Մուկն Առիւծին թաթ չիյնա՞յ :  
 Թէ որ կամաց թաթ սեղմէր նա ,  
 Խեղճ Մուկին բանն էր բուսել :  
 Բայց սա սկըսաւ աղաչել .

— «Մեղայ ձեզ տէր , չըտեսայ ,  
 «Աչքիս արցունքը վըկայ :

«Ուրիշ անգամ հեռու հեռու  
 «Կ'երթամ ես խաղ խաղալու :

«Ձեզ անհանգիստ ասկէ վերջ  
 «Ձեմ ըներ ես կեանքիս մէջ :

«Ներէ յանցանքս , տէր իմ հըսկայ .  
 «Մահուանէս ձեզ ի՞նչ օգուտ կայ» :

Անուշիկ խօսքեր ճարտասան Մըկին  
 Գթոյ շարժեցին անեղ կենդանին :

— «Գընա՛ , ըսաւ , խաղք եղիր ,

«Բեղ կը բաշխեմ այս անգամ .

«Այլ միշտ եղիր մտադիր ,

«Ուրիշ անգամ թէ արթըննամ ,

«Գու պատճառաւդ անոյ ջրունէս ,

«Պատիժդ կ'առնես» :

Թողուց Մուկիկ որ ապրի :

Ինքն իյնալով կըռնըկի

Ասդին , անդին թաթերն , ոտքեր ,

Կը ճապկըտէր , կը յօրանջէր :

Սա եւս մտքէն չէր անցընել

Որ թակարդի մէջ է ինկել :

Թաթեր , ոտքերը կաշկանդուած ,

Մընաց առիւծը յետ ինկած .

Ու որչափ որ վե՛ր վար շարժէր ,

Կ'ամբանային ա՛յնչափ թելեր :

Սիրտը փըրթաւ Առիւծին ,

Այնպէս անեղ մըռընչեց

Որ լեռն ու ձոր թնդացին :

Մուկը անոր ձայնը լսեց .

Դարձաւ եկաւ . — ի՞նչ տեսնայ .

Իր քիչ առաջ աղատարար ,

Թէ վրայ գըլխու չըփութայ ,

Պիտի սատկի հոն շարաչար :

Աճապարեց

Որոգայթին լարը շուտով

Կըրծեց կըրծեց

Իրեն սո՛ւր սուր ակուններով :

Առիւծ մէկ մ'որ նո՛ր թափ տըլաւ

Թակարդին լարը քակուեցաւ :

Ոտքի ելաւ զազանն իսկոյն .  
 Թափեց փոշին հողն բաշերուն .  
 Արիւնալից աչքը չորս դին  
 Պարարեցով մէջն անտառին ,  
 Մէկն կը փընտռէր , թափել զլխուն  
 Սրաին էրուցք ու բարկութիւն :  
 Այլ տեսաւ նա , ճիշտ դիմաց  
 Բարերար Մուկը կայնած ,  
 Որ այսպէս կ'ըսէր ,  
 «Ձեզ երկայն օրեր .

«Ինծի ըրած աղէկութեանդ փոխադարձ ,  
 «Տէր իմ առիւծ , ընդունէ՛ այս փոքրիկ վարձ» :

Հ. Բ. ԲՈՒՅՄԵՐԵԱՆ

**ԲՈՒՅՄԵՐԵԱՆ .** — Ամէն մարդու օգտակար եղէք , ձեր ընկերներուն՝ որոնք ձենէ տկար են , կամ անոնց՝ որ ձենէ զօրաւոր են . անոնք կրնան օր մը ձեզի ծառայութիւն մատուցանել . Եւ մանաւանդ առանց որեւէ վարձատրութիւն յուսալու օգտակար եղէք այլոց : Ըսուած է . բարին չկորսուիւր ետքեմ : Եւ ինչո՞ւ . Անոր համար նա որ ծառայութիւն կը մատուցանէ , եթէ բարի սիրտ ունի , ինքզինքը երջանիկ կ'ըզայ :

**ՀՐԱՀԱՆԳ .** — Ի՞նչ հողով են , ամենուն , բարիք , մեկուն , պատուոյն , շահին , վնաս , մագի , քելով , կորստեան . առիթ , ջարիք , երախտիք , անտառին , խաղալիք , մուկն , առիւծն :

**ԱՌԱՍԾ .** — Աղէկութիւն ըտէ ծովը քափէ , ծովը չըտէ մէ ալիքը կը թերէ :

**ԱՌՈՒՑ .** — Առիթ , պարճաւ . — Երախտիք , աղիւսութիւն . — Ման գալ , պարտէլ . — Խաղք եղիր , խաղա . — Ճապկըտիլ , յօրաճելու երէննալ ( Կերէլեք ) . — Բաշ , Կերտանայ մալ :

### 14. — ՇԱԳԱՆԱԿՆԵՐԸ

**ԲՈՎԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ .** — Ահա աշուն է . հովը սաստիկ կը փչէ . աղէկ . այն վար կը թափէ շագանակները . Ինչ ուրախութիւն , երթալ ժողովել փայլուն գեղեցիկ շագանակները :



Աշնան հովը զըւարթ մանկանց  
 Առատ առատ կուտայ իր դանձ ,  
 Այն կը ցանէ մեծաքանակ  
 Անոնց ճամբուն վրայ շագանակ :

Կանանչ պատեանք ինկած գետին  
 Ահա շուտով մը կը բացուին .  
 Գոհարի պէս յայտնուելով  
 Այն պտուղներն առատ , համով :

Եւ տղաքներ , այն խումբն անվախ  
 կը լեցընեն ուրախ ուրախ  
 Իրենց սակառ և կա՛ր կողով  
 Շագանակներ հազարներով :

Ուրախութիւն անոնց աչքին  
 Փայլ տայ , յետոյ երեկոյին  
 Ճարտարութեամբ ամէն տղաք  
 Պիտի շինեն իրենց մանեակ :

**ՌԱՐՈՅԱԿԱՆ.** — Լաւագոյն խաղալիկներն ստակով գնուածները չեն միշտ, այլ անոնք՝ զորս մարդ իր ձեռքով կը շինէ :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ են հետեւեալներուն հակաճիղները, աշխան հով, զուարթ, մանուկ, առատ, ցանկ, մեծաքանակ, գետին, համով, ուրախ, ուրախութիւն, շինել :

### 15. — ԿՈՐՍՈՒԱԾ ՏԱՍՆՈՑԸ



**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Տղայ մը կուլար, որովհետեւ տասնոց մը կորսնցուցած էր. անցորդ մը զՅայ անոր վրայ և ուրիշ զրամ մը տուաւ անոր : Վայրկենէ մը վերջ տղան իր կորսնցուցած զրամը գտաւ : Տղան կրնար երկուքն ալ պահել, բայց պարկեշտ և վեհանձն էր. դարձուց զրամն իւր տիրոջը :

Աղնուական անգղիացի մը տեղ մը պտըտելու առեն պատահեցաւ տղու մը՝ որ կարծես թէ կորսուած բան մը կը փնտռէր և կուլար :

— Ի՞նչ ունիս, ըսաւ նա անոր :

— Ա՛հ, պարոն, մայրիկս ինձ դրամ մը տուաւ որպէս զի կաթ առնեմ, զայն կորսնցուցի :

— Տղա՛ս, անհոգ եղիր, բան մը չէ այդ դժբախտութիւնդ : Ա՛ն, ա՛հա քեզի ուրիշ մը, ա՛լ մի՛ լար :

Այս ըսաւ և հեռացաւ :

Բայց անկէ յիսուն քայլ անդին, լսեց որ իր ետե-

ւէն մէկը կը վազէ. տղան էր որ անոր հասնելու կ'աշխատէր :

— Պարո՛ն, ըսաւ անոր՝ տղան բոլորովին ուրախ, դրամս դտայ և ձերը ձեզի կը դարձնեմ :

— Շատ աղէկ, տղա՛ս, դուն ողորմութիւն չես ուզեր. իրաւունք ունիս, միշտ պահէ այս փափուկ և հպարտ ուղղութիւնդ, և ինչ որ ալ ըլլայ վիճակդ, պիտի պատուեն քեզի :

**ՌԱՐՈՅԱԿԱՆ.** — Տղաներ, եթէ հիւանդութիւնը, թշուառութիւնը ձեզի ստիպեն նպատակ մը ընդունելու, այն հաստատ որոշմամբ ընդունեցէք միայն՝ թէ երբոր կարող ըլլաք, այն նպատակ պիտի փոխարինէք :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Սոյն հատուածի մէջ նշանակուած եզակի բառերն յօքնակի բրէք, յսքնակիները եզակի :

**ԱՌԱՅ.** — Ոսկին եւ արծաթը փորձախտով կը փորձուին, բայց մատրոնակն արծաթը ոսկուով եւ արծաթով :

### 16. — Բ Ն Ա Ձ Դ Ո Ւ Ս

**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Կանուխէն սորվինք Աստուծոյ զոյուածիւնն և գիտնանք թէ նա կուտայ մեզ ամէն բան :

Ո՛վ սորվեցուց փոքրիկ թռչնոյն  
Մամուով, փետրով բոյն մը շինել,  
Ո՛վ սորվեցուց իրեն խնամով  
Ձագերն անոր մէջ ամփոփել :



Ո՞վ սորվեցուց ճարտար մեղուին  
Անոյշ ծաղկանց մէջ թըռչրտել ,  
Ու ձմեռուան իրբեւ մնունդ  
Փեթակին մէջ մեղր համբարել :

Ո՞վ սորվեցուց փոքրիկ մրջման  
Գետնի տակէն ծակեր փորել ,  
Եւ ամարան տաք օրերուն  
Ձմրան համար կեր պատրաստել :

Աստուած անոնց ցըցուց ճամբան  
Իրենց պէտքերը հոգալու ,  
Ինքն է որ խելք ու շնորհ կուտայ  
Աշխատասէր տղաքներու :

**ՈՒՐՈՑԱՆՈՒՆ** . — Ռնազդու՛մը ներքին յօժարութիւն մ'է , որով գործեր կը կատարենք առանց հասկնալու զանոնք կամ անոնց պատճառները քննելու :

**ՀՐԱՀԱՆԳ** . — Ի՞նչ հողով են , փոքրիկ բուջիօյն , մամուով , փետրով , բոյն , խնամով , ձագերն , ճարտար մեղուին , ծաղկանց , ձմեռուան , փեթակին մէջ , մրջման , ծակեր , ամարան , կեր , ճամբան , խելք , շնորհ :

**ԱՌԱՅ** . — Մշակեմք միշտ քարիք գործերու , աշխատասէր ըլլալու քննազդներն :

**ՈՒՐՈՑ** . — Համբարել , խելք — կեր , — քէլ :

### 16. — ՄԱՅՐԸ, ՏՂԱՆ ԵՒ ՊԱՐԿԵՐԷՆԵՐԸ



**ՈՒՆԿԱՆԻՆՆԵՐԸ** . — Է՛դ պարկերէն փորին տակ տեսակ մը գրպան ունի , ուր կ'ապաստանին իր ձագերը , երբ ասոնք վտանգի մէջ ըլլան , Ահա թէ ինչպէս սիրով նա անոնց վրայ կը հսկէ :

Ծունկին վրայ նստած իր մօր՝  
Բերուցի աղան կ'ըսէր մի օր .  
«Մայրի՛կ , ի՛նչ է այս կենդանին ,  
«Որ կը պտըտի իր ձագերով միասին .  
«Աղուէս թըլի» : — «Ձաւա՛կս , այն է  
«Կ'ըսէ , մատակ մի պարկերէ :  
«Ամէն մօրմէ բարեգորով  
«Լի խընամով , նաեւ սիրով :  
«Ըտտամոքսին քով ունի քսակ ,  
«Կարծես պարկի մ'է այն տեսակ ,  
Ուր իր ձագեր վտանգի ժամուն  
«Ծածկեն իրենց տկարութիւն :  
«Աղմուկ մ'ըրէ , ի՛նչ կ'ըլլան տե՛ս» :  
Ձեռք զարնէ տղան և պարկերէն փութապէս  
Վեր կը կանգնի և կը պոռայ ողբազգին :  
Ահա ձագեր դիմեն իրենց մօր դրկին :  
Պարկը բացուի եւ ամէն ձագ

Հոն կը մտնէ արագ արագ:

Այնուհետեւ մայրը շուտով

Փախչի, իր գանձ հետ կրելով:

Բերուցի կինն կ'ըսէ տղուն այն ատեն,

«Տըզա՛ս, թէ բախտն ըլլայ քեզ դէմ,

«Միշտ պարկերէն յիշէ, գիտցի՛ր յաւիտեան,

«Մօր մը ծոցն է միշտ ապահով ապաստան»:

**ՅԵՐԻԱՑ**

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Տղաքներ, երբ դուք փոքր ցաւ մը ունենաք, ձեր մայրը ձեզ կը գրկէ, կը զգուէ, և ձեր ցաւը անմիջապէս կ'անհետանայ: Երբ մեծնաք, դարձեալ նա ձեր մտահոգութիւնները պիտի փարատէ, և ձեզի սիրտ պիտի տայ անոնց յիմարելու:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ կ'ըսուին հետեւեալ բառերուն շիզագիր դրուածներն, ծուկին վրայ, ստամոքսին տոլ, վտանգի ժամուն, իր հետ, քեզ դեմ:

**ԱՌԱՍ.** — Մեր ծնողն են մեր շաւագոյն բարեկամները:

**17. — Մ Ի Ո Ւ Թ Ի Ն Ը Ն Տ Ա Ն Ե Ա Ց Մ Է Ջ**



**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Աղկ հետեւեցէք այն ուղեւորութեան՝ զոր խաղողի ողկոյզը կ'ընէ ձեռքէ ձեռք անցնելով:

Մայր մը իր աղջկան խաղողի ողկոյզ մը տուաւ. փոքրիկ աղջիկը զայն առնելէ ետքը մտածեց որ այդ

ողկոյզը իր եղբորը շատ հաճելի պիտի ըլլար, ուստի զայն անոր տուաւ: Եղբայրը առաւ զայն և ըսաւ. — «Հայրս որ վարը կ'աշխատի, անշուշտ յոգնած է. այս զովարար ողկոյզը անոր տանինք»:

Հայրն ալ առաւ: Յետոյ քիչ հեռու իր կինը տեսնելով իրեն քով կանչեց, որպէս զի ողկոյզը անոր տայ: Այսպէս խաղողին ողկոյզը դարձեալ զայն տուող ձեռքերուն մէջ եկաւ, և մայրը շնորհակալ եղաւ Աստուծոյ այն միութեան համար՝ որ կը տիրէ ընտանեաց ամբողջ անդամներուն մէջ:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Ամենէն զեղեցիկ բանն է այն ընտանիքն՝ ուր ամենքն զիրար կը սկսեն և իրարու հետ կապուած են սերտիւ: Փոքրիկ տղաքներ, դուք կրնաք այս երջանկութիւնը յառաջ բերել, նայեցէք որ բարի և սիրելի ըլլաք: — Աղէկ պտուղ մը ուտելն հաճոյք մ'է. բայց զայն մեր մէկ սիրած անձին տալն աւելի մեծ հաճոյք է:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Հողովեցէք, մայր, աղջիկ, խաղող, ողկոյզ, եղբայր, հայր, ձեռք:

**ԱՌԱՍ.** — Սիրեցե՛ք զիրար: — Չաղացը երկու ֆարկն, սերը երկու գլխէն: — Ըրե՛ք ուրիշին՝ ինչ որ պիտի ուզե՛իք որ ուրիշները ընեն ձեզ: — Հայրեր և մայրեր, երբ կ'ուզե՛ք որ ձեր զաւակները հաւերաշխ ըլլան, դուք ալ այնպէս եղե՛ք:



### 18. — ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ** . — Աղուէս մը սարփինայի մը առջեւէն կ'անցնի . խաղողներն փխրածաբեր են , բայց շատ բարձր են : — Ի՞նչ ընէ աղուէսը . փոխանակ ըսելու թէ չեմ կրնար հասնիչ այն գեղեցիկ խաղողներուն , կ'ըսէ . «Ձեռն ուզեր որովհետեւ անոնք սակաւին շոտ կանանչ են» :

**Քաղցած Աղուէսուկն ինչ ըրաւ չըրաւ ,**

**Այգի մը մրտաւ Տեսնէ որ խաղողները**

**Կուզ կախուած կը վառին .**  
**Սանամարին ոչ թէ միայն աչքերը ,**  
**Ակուաներն ալ կըրակ առին .**  
**Կուզերն որ ըսես՝ իրարմէ հասուն ,**  
**Մէկ մէկ յակընթի նըման պըսպըզուն :**  
**Ի՞նչ էր՝ գիտե՞ս՝ ցաւալին ,**  
**Կուզերը խիստ բարձր էին :**  
**Մեր Աղուէսուկը շատ աշխատեցաւ .**  
**Ցատքեց ցատքըրտեց , չորս դին ման եկաւ .**  
**Ճար մը չը գտաւ ,**  
**Մէկ կուզ մըն ալ փըրցընել չը կրցաւ .**

**Ամբողջ ժամէն աւելի՝**  
**Պարապ տեղը կը յոգնի .**  
**Կ'եղնէ կ'երթայ բանն ու կ'ըսէ .**  
**«Է՛հ , ի՞նչ կայ ,**  
**Տեսքին նայիս նէ գէշ չէ ,**  
**Բայց կա՛փ-կանանչ է ահա .**  
**Չե՛ս գտներ մէջը եւ ոչ մէկ հատիկ**  
**Հասուն խաղողիկ :**  
**Գիտե՛մ , բերանդ որ դըրուին ,**  
**Իսկոյն ակռաներըդ չարաչար պիտի հարուին» :**

**Գարբիէ Արեւոյսի . Այվագեան Գաիլով**

**ԲԱՐՈՅԱԿԱՆ** . — Ի՞նչ կը մտածէք Աղուէսին վրայ . իրաւունք ունի չցաւելու , քնն օգուտ ցաւելն : Բայց իրաւունք չունի ստելու . ունայնամտութեամբ կը ստէ , կեղծելով թէ կ'արհամարհէ իր ուզած խաղողները : — Սարգիս կ'ուզէ գնել գեղեցիկ գիրք մը այս ինչ գրատունէն , բայց գիրքը սուղ է : Եթէ զուարթութեամբ իր վիճակին համակերպի , իրաւունք ունի . չունենալն ամօթ չէ : Բայց եթէ ըսէ . «Այս գիրքը շատ ոչինչ բան է , չեմ ուզեր գայն» : Այս կերպով ստախոս մը և ունայնամիտ մէկը պիտի ըլլայ :

**ՀՐԱՀԱՆԳ** . — Հետեւեալ գոյականներուն քով մէկ մէկ ածական դրեք . Աղուէսուկ , այգի , խաղողները , աչքերը , ակռաները , յակիներ , ժամ , տեսք :

**ԱՌԱՄ** . — Երբ մարդ սիրածը չունենայ , ունեցածը պիտի կ'սիրէ :

**ԲԱՌՔ** . — Կուզ , «գոյգ» . — Պսպղուն , գոյգու :

20. — ԱԳՌԱԻՆ ՈՒ ԱՂՈՒԷՍ



ՐՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ. — Ահա կը տեսնէք թէ քնչպէս Ազուան, որ յիմար մ'էր, կորսնցուց պանիրը, որպէս զի աւելի հաճոյքով մը մտիկ ընէ Ազուէսին շողորթութիւններուն:

Ոստի մը ծայր  
Պարոն Ազուան էր թառեր.  
Բերանն աւար

Գողցած պանրի կտոր մ'ունէր:

Հոսը կ'առնու

Ազուէսը վեր վեր կ'իյնայ.

Անուշ լեզու

Կուգայ վարէն ձայն կուտայ.

«Բարե՛ւ բարե՛ւ,

Պարոն Ազուա,

Բեղ շատ արեւ.

Ո՛հ, ի՛նչ աղուոր

Ի՛նչ գեղեցիկ

Ես իրաւ որ:

Սուտ չըկարծես

Թէ ձայնդ ալ է

Սա տեսքիդ պէս,

Դուն մէկ հատիկ

Անառախ մէջ հիւր հաւերուն ես փիւնիկ»:

Աս ըսելով խընտումէն

Կ'ելլէ Ազուան ինքիրմէն.

Կըտուց մը լայն կը բանայ

Որ անուշ ձայնը ձըգէ.

Որսը բերնէն վար կ'իյնայ.

Ազուէսն իսկոյն կը խըլէ,

Չայս ըսելով իրեն հոն,

«Միամիտ Պարոն,

Գընա խելք սովրէ.

Ամէն շողորթ կ'ապրի անոնցմէն

Որոնք կը խարուին իր անուշ լեզուէն.

Աս դասն որ հիմա դու ինծմէ առիր,

Կ'արժէ, խօսք չը կայ, կըտոր մը պանիր»:

Ազուան ամօթով

Սըրտին էրուքով,

Երդում կ'ընէ հոն, թէպէտ քիչ մը ուշ,

Մէյ մ'ալ չաւտալու լեզուաց փաղաքուշ:

Թարգմ. Հ. Գեորգ Հիւրմիւզ

Լաճաճիկ

ՐՈՎՈՑԱԿԱՆ. — Ազուէսն խարբայ մ'է, բայց իր տուած դասն օգտակար է: Եթէ մտիկ ընենք շողորթութիւնը, պիտի խարուինք. Ազուան պէս մենք ալ պիտի պատժուինք մեր անմիտ ունայնամտութեան համար: Միայն անոնց մտիկ ընենք՝ որոնք համարձակօրէն կ'ըսեն մեզ ինչ որ կը մտածեն մեր վրայ, և որոնց յանդիմանութիւններն և խորհուրդները զվեզ կը կրթեն և լաւագոյն կ'ընեն:

ՀՐԱՀԱՆԳ. — Ո՞րոնք են հետեւեալ րայերուն տերերը, բառեր էր, վեր վեր կ'իյնայ, չկարծես, կը բանայ, վար կ'իյնայ, կը խէ, կ'ապրի, Երդում կ'ընէ:

**ԱՌ-ԱԾ.** — Ով որ նուազ կը շողոփորք մեկը, նա աւելի կը սիրե գանի:

Ազնաւին ըսեր են, յոյնոց մեջ ո՞րը գեղեցիկ է, — ըսեր է իմ ձագս:

**ԱՍՈ-Ռ.** — Փիւնիկ, թռչուն մը, ~~աչ~~ ~~է~~ ~~ւ~~. — Փաղարուշ, ~~ւ~~ ~~ա~~ ~~ւ~~ ~~ւ~~.

## 21. — Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ն Ե Ր Ը



**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — « Դպրոց մտնել, աշխատիլ — ինչ ձանձրալի բան, կը մտածէր Ասատուր, և ո՞րչափ երջանիկ են դպրոցականներէ աւելի ծիծեռնակները»: Բարեբախտաբար մէկը անոր բացատրեց ծիծեռնակներուն տուած խրատը: Այն ատեն Ասատուր զուարթութեամբ դպրոց մտաւ և աղէկ աշխատեցաւ:

Ասատուր դպրոց կ'երթար. բայց դրան առջեւ կանգ կ'առնու, գլուխը վեր կը վերցնէ և կը տեսնէ ծիծեռնակներն, որոնք կ'երթան կուգան, մերթ գետնի երեսէն երթալով, մերթ տանեաց վրայ բարձրանալով: « Ա՛հ, կ'ըսէ նա, ինչ երջանիկ ապրելու եղանակ »:

Մարդ մը որ հոն դանի կը դիտէր, հասկըցաւ տղուն միտքը և ըսաւ անոր, « Դուն չես դիտեր թէ ի՞նչ կ'ընեն այս ծիծեռնակները: Անոնք ձանձեր կը բռնեն որպէս զի իրենց ձագերուն տան, որոնք առանց անոնց պիտի մեռնէին: Սորվէ՛, ասոնց զուարթութեամբ թըռչելը դիտելով, թէ ի՞նչպէս մարդ պէտք է իր պարտքը կատարէ զուարթ սրտով և առանց նեղուելու »:

— « Այո՛, կը հասկընամ, ըսաւ Ասատուր, աղէկ դաս է այդ, և դպրոց կը վազեմ »:

**ՌԱՐՈՅԱԿԱՆ.** — Հանգիստ սրտով կատարուած աշխատութիւնը ձանձրացուցիչ չէ երբեք: Զուարթութեամբ դպրոց մտիք, լաւ աշխատէ և առանց նեղուելու: — Ծիծեռնակները ուրախ են, որովհետև իրենց ձագերուն համար կ'աշխատին — Բու ծնողքդ ալ հանդրով կ'աշխատին, մտածելով որ դուն անոնց պէտք ունիս: — Դուն ալ նոյնպէս զուարթութեամբ աշխատէ, որովհետև դուն պիտի ուրախացնես ծնողքդ, երբոր բարի և ուսեալ մէկն ըլլաս:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ կ'ըսուին հետեւեալ շեղագիր բառերը, գշուխը վեր կը վերցնէ, կը տեսնէ ծիծեռնակները, գանի կը դիտեր, հասկըցաւ տղուն միտքը, անոնք ձանձեր կը բռնեն, իր պատճիւր կատարէ:

## 22. — Ա Ռ Ջ Ի Ն Ե Կ Ը



**ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Հօր և մօր համար իրենց տղան աղբիւր է սուրբ բանաստեղծութեան:

Իմ Գառնուկիս սիրտն է  
Զուտ, մաքուր ոսկի .  
Ինձի մըտիկ կ'ընէ,  
Կը պառկի խօսքի:

Երկու աչուկներէն  
Զինքն ըրի պաշիկ:

Թարթիչները խրփեց,  
Գիրկս ըրաւ պաճիկ :

Օրուան լուսէն առաջ  
Կ'եղնէ շուտ առտուն .  
Թռչնիկներուն հետը  
Ինքն ալ է արթուն :

Քանի՛ վըրան նայիմ  
Սիրտըս կը բացուի .  
Թուշն է կարմիր խնձոր  
Եւ աչուին ծաւի :

**Միեռմ Յովհաննէսեան**

**ՀՐԱՀԱՆՔ.** — Ի՞նչ կ'ըսուին հետեւեալ շեղագիր քառերը, ինձի մտիկ կ'ընե, կը պատկի խօսքի, երկու աշուկներէն զինքն ըրի պաշիկ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Տղաքներ, մտածեցէք թէ ինչ բարիքներ կ'ընդունիք ձեր ծնողքէն : Այս մտածումը միայն ձեզ պիտի ստիպէ անոնց կամրին համեմատ մեծնալ, այսինքն բարի ըլլալով :

**ԲԱՌՊ.** — Խփել, Գոցել — Ծաւի, Կողոյր :

**23. — ԵՐԿՈՒ ԶԱՄԲՈՐԴՔ**



**ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ.** — Կը տես նէք անա թէ ի՛նչպէս Թումաս գրկուեցաւ այն քսակէն, զոր չուզեց բաժնել իր ընկերոջ հետ :

Թումաս ազբար եւ Թորոս սերտ բարեկամ,  
Օր մը մօտի քաղաքն երթալ ըսկըսան .  
Թումաս տեսաւ մէջտեղ ճամբուն  
Ոսկւոյ քրտակ մը լեփ-լեցուն .  
Վար ծըռեցաւ առաւ զայն,  
Արտորնօք դբաւ իր գըրպան :  
Թորոսն ըսաւ ուրախ սըրտով . —

— «Բաղդերնիս լաւ յաջողեցաւ : » —  
— «Չէ, կըրկնեց Թումաս պաղուկ նայուածքով .  
«Բաղդերնիս» այս տեղ չը յարմարեցաւ .  
«Թէ կ'ուզես զրուցէ, բաղդըդ բանեցաւ : » —  
Շատ տրտմեցաւ սիրտ Թորոսին՝  
Պաղ խօսքերով բարեկամին .  
Թէեւ լըսեց իբր անտարբեր,  
Սակայն արիւնը զարկաւ վեր :  
Յետոյ դաշտէն անտառ մըրտած ժամանակ,  
Վազեցին յանկարծ  
Թումասի դիմաց  
Արիւնկըզակ երկու կըտրիճ աւազակք :

Խեղճը վախէն լեղապատառ

— «Կորանք, կանչեց, Թորոս աղբար:» —

Աղբար Թորոս անտարբեր,

— «Կորանք, ըսաւ, մի՛ գրուցեր,

«Այդ տեղ, կորայ, կուգայ յարմար:»

Խոտորելով իր ճամբան՝

Գնաց մըտաւ ծառաստան:

Թուճաս մինակ ի՛նչ ընէր:

Սիրտը մեկնիլ չէր ուզեր,

Ուստի շուտով քրտակն հանեց

Աւաղակաց ձեռքը յանձնեց:

Թէ դու յաջող ու լաւ օրիդ

Բու բարեկամ չը յիշես,

Բու բարեկամդ ալ նեղ օրիդ

Ձի նայիր բնաւ քու երես:

Հ. Ք. ՔԱՆՈՆԵՐԵԱՆ

ՈՒՐՈՑԱՎԱՅ. — Թուճաս ոչ միայն եսասեր մ'է, այլ և անպարկեշտ մէկը: Որովհետեւ գտնուած բան մը ոչ թէ գտնողինն է, այլ զայն կորսընցնողին: Այսպիսի պարագայի մը մէջ պարտականութիւն է գտնուած առարկայն տեղւոյն իշխանութեան յանձնել:

ՀՐԱՀԱՆԳ. — Որոշեցէք սոյն հաստուածին մէջ տեր քայիները:

ԱՌԱՄ. — Ի՞նչ կերպով ստացուած հարսուրիւնը օգուտ չունի: Ամեն մտրդ ջուրը իր ջաղացքը կը կապէ:

ՈՒՈՔ. — Արիւնկզակ, ի՞նչ քաղցած:

24. — ԱՂՈՒՔՍՆ ԵՒ ԳՈՐՏԸ



ՈՂՈՒՔՍՆ ԳՈՐՏԻՆ. — Աղուէսը շատ չար է, և բոլոր առակներուն մէջ գրեթէ ինքն է որ ուրիշ կենդանիներուն խողեր կը խաղայ: Բայց այս տեղ ինքն է որ կը բռնուի անվնաս և փոքրիկ կենդանիէ մը, այսինքն գորտէն:

Օր մը, աղուէս մը եկաւ ճահիճի մը եզերքը ջուր խմելու. գորտ մը խոտին վրայ նստած էր. նա անոր ետեւէն կարկաչեց. «Ե՛լ ատկէ, կ'ըսէ աղուէսն, ապա թէ ոչ քեզ կը լափեմ»: — «Մի՛ հպարտանար այդչափ, կ'ըսէ գորտը, դուն քու արագընթացութեամբդ կը հպարտանաս, բայց ես քենէ գերազանց եմ»:

Աղուէսն սկսաւ խնդալ: Բայց երբ նա շարունակ իր վազելու կերպը կը գովէր, ըսաւ անոր, «Օ՛ն ուրեմն մէկտեղ մըցինք, վազենք, տեսնենք թէ ո՞վ առաջ պիտի հասնի մօտի քաղաքը»:

Այս ըսելով աղուէսն ետին դարձաւ:

Գորտը այն վայրկենին աղուէսին խիտ պոչին վրայ ցատքեց եւ հոն պահուրտեցաւ:

Եւ անա մեկնեցաւ, հասաւ: Կանգ կ'առնու քաղաքին դուռն եւ ետին կը դառնայ, նայելու թէ հեռուն պիտի տեսնե՞ գորտը: Նա այն ատեն կ'իջնէ պոչին տակէն, եւ երբ աղուէսն ճամբայ կ'եղնէ քաղաք մտնելու համար: «Վա՛յ, կ'ըսէ անոր, դուն ծայրն հա-

սար : Ես ետ պիտի դառնայի կարծելով թէ չէիր ուզեր  
դալու : »

Գորտը բոլորովին հպարտացած լճակը դարձաւ , եւ  
ճամբուն վրայ կը պարէր իր յաղթութեան համար :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Գիտէք թէ ինչն այս պատմութիւնը ձեզ հաճոյք  
կը պատճառէ : Անշուշտ զարմանալի ըլլալուն համար չէ : — Աղուէսը  
նախ կը ծաղրէ գորտը , և վերջը գորտը զանի կը ծաղրէ :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ տեսակ րայիք են , եկաւ , խմելու , նստած էր ,  
կարկաչեց , կ'ըսէ , լափեմ , մի' հպարտանար , եմ , սկսաւ , ինդալ ,  
կը գովէր , ըսաւ , մրցինք , վագենք , տեսնենք , դարձաւ , ցատքեց ,  
պանուրտեցաւ , մեկնեցաւ , հասաւ , կանգ կ'առնու , կը դառնայ :

25. — ԱԳԱՀՆ ԵՒ ՀԱԻ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.** — Ոսկիէ հաւկիթ ածող հաւ չիկայ . բայց  
կան վաճառականութիւններ , որ ամէն օր օրինաւոր շահ կ'արտադրեն  
և կանոնաւոր ապրուստ մը կը բերեն :

Տղայութեանըս ժամանակ  
Ագահութեան գէշութեանը օրինակ  
Տեղ մը ա'յս եմ կարդացեր ,  
Թէ ատենով Ագահ մարդ մը կայ եղեր՝  
Որ ոչ արհեստ ունէր ձեռքը՝ ոչ պաշտօն ,  
Եւ սակայն սընտուկն էր լեփ-լեցուն :  
Այս մարդը հաւ մը ունէր ընդասուն .  
Հաւն ալ բա՛ն է , ըսէ դուն . —  
Այն հաւը հաւկիթ կ'ածէր .

Ոչ թէ հասարակ հաւկիթ , որ է ձու ,  
Հապա ոսկիէ՝ կարծես թէ թափծու :  
Բայց ի՞նչ կ'ըսես որ Ագահին համար այն շահը քիչ եկաւ .

Տե՛ս թէ միտքը ի՞նչ եկաւ .  
«Արի ըսաւ՝ սա հաւուն փորը բանամ .  
Անշուշտ մէջը ոսկեհանք մը կը գտնամ :  
Խեղճ հաւը մորթեց ու փորը ճըղքեց ,  
Բայց ի՞նչ գըտաւ հոն , եւ ի՞նչ ձեռք ձըգեց . » —

Սուրբական քարաճիկ  
Ու հասարակ փորոտիք :  
Գարբիէ Արեւոյիս . Այվազեան  
Քա. իւլ

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Կան վաճառականներ՝ որոնք կ'ուզեն շատ շահիլ ,  
գէշ ապրանք ծախելով շատ շատ , գործաւորներ՝ որ կ'ուզեն շատ շահիլ  
իրենց գործերը գէշ և շուտ պատրաստելով : Եւ սակայն քիչ կը պատահի  
Վաճառականը գնող չունենար , գործաւորն ալ գործ չի գտնէր : Անոնք այս  
առակին Ագահին պէս կ'ընեն այս կերպով , կը սպաննեն ոսկի ածող հաւը :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ի՞նչ բառեր կը շինուին հետեւեալ բառերէն ,  
տղայ , ագահ , մարդ , արհեստ , հաւ , շահ , ոսկի :

**ԲԱՌՔ.** — Ընդատուն , հանդիսակոչ :







## 26. — ԱՐՁԻՆ ԲՈՒԻՆՆ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ. — Մտտակ  
արջ մը շատ տղեղ ձագ մը ունէր,  
զոր կ'ուզէր սպաննել: Բարեբախտա-  
բար նա լզեց լզեց և սիրուն արջուկ մը  
ըրաւ իր ձագն:

Մարիկ Արջուկ ձագ մը բերաւ .

— Այդ կարգէ դուրս բան չէ իրաւ , —

Բայց դու հարցուր թէ ի՞նչ ձագ .

Շրնչաւորի տիպ կերպարանք

Չունէր այդ խեղճ արարած .

Մըսի կըտոր մ'էր ձրգուած ,

Տեանողին սիրտը չէր քաշել

Մօտենալով վըրան նայել :

Այլ սակայն դուռ դըրացի

Թափեցան աչքի լուսի .

Նոր ցուցանքին սեւարեւ մօր՝

Ոմանք սըրտանց , այլք կեղծաւոր

Սուտակասպաս փուճ խօսքերով

Սիրտ կուտային զըրուցելով .

— « Այն շատ չապրիր , կը մեռնի » .

Այլք թէ « Ապրի , վընաս չունի .

« Խելօք լինի , տեսքն ի՞նչ է » :

Իսկ ուրիշներ զայս կ'ասէին

Թէ « Վերէն եկած խաչին

« Համբերել՝ մեղի պարտք է » :

Յաւած մօր սըրտին այսպիսի խօսքեր

Խոր կը բանային նորանոր վէրքեր :

Բայց ասելիք խօսք մը չըկար ,

Յուցանք մէջ տեղ կա՛ր երեւնար :

Սակայն դու տե՛ս , թէ ի՞նչ բարիք

Հանեց՝ չարէս խելօք մարիկ :

Հըրէջ ձագուկն առջիւն առած ,

Սմբողջ օրեր , գիշերն ի բուն

Աշխատեցաւ՝ զայն լըզելուն .

Որ վըրան դեռ ամիս չանցած ,

Մըսի կըտորն կենդանացաւ :

Հըրէջն եղաւ

Արջուկ մ'աղուոր ,

Աշխոյժ , ճարպիկ ու գունաւ ու կըրոր :

Հ. Բ. ԲՈՒՍԵՆԵԱՄ

ԲՈՒՐՈՅԱԿԱՆ. — Տղաքներն պզտիկ արջերու նման են. պէտք է որ  
ծնողը և ուսուցիչը զանոնք շարունակ լզեն: Տղաքներ, անոնց աշխատու-  
ծիւնը զիւրացուցէք ձեր հնազանդութեամբ և երախտագիտութեամբ:

ՀՐԱՍԱՆԳ. — Ի՞նչ մամանակ և ի՞նչ եղանակ են հետեւեալ  
բայերը. բերաւ, հարցուց, ունէր, էր, չէր քաշեր, բախեցան, կուտա-  
յին, չապրիր, կը մեռնի, ունի, կ'ասէին, կը բանային, երեւնար,  
հանեց, աշխատեցաւ, եղաւ :

ԲՈՒՐ. — Տիպ, յեւ. — Սուտակասպաս, Իւզօւոր. — Յուցանք,  
հրէ :

27. — Մ Ա Յ Ր Ի Մ



**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Ո՛վ մանկիկ, կին մը կայ որ կը հսկէ քու վրադ զիշեր ցորեկ, որ քեզի կը սորվեցնէ բարի ըլլալ՝ բարութեան օրինակը տալով քեզ, որ քեզ կը սիրէ ամենէն աւելի: — Դուն գիտես թէ նա քու մայրդ է:

Երբ ես գիշերն քնանամ խաղաղ,  
Երազներով և օրօրուիմ,  
Դուն իմ վըրաս հըսկես ուրախ,  
Մա՛յր իմ:

Զիս կշտամբես անուշ անուշ,  
Թէ չար գործեմ կամ սըխալիմ,  
Քեզմով չարէն կ'ըլլամ ըզգոյշ,  
Մա՛յր իմ:

Դու իմ վըրաս միշտ մըտածկոտ,  
Սոսկ դու անկեղծ ինձ մըտերիմ,  
Ամէն ժամուն քեզ եմ կարօտ,  
Մա՛յր իմ:

Քեզմով գիտցայ զԱստուած սիրել,  
Ամէն բարիք քեզմով ունիմ,  
Ո՛վ սիրելի և անձնուէր,  
Մա՛յր իմ:

Թէ քեզ տանջէ բախտն անիրաւ,  
Ես քեզ նեցուկ պիտի կանգնիմ,  
Մինչեւ ըլլաս ծերուկ պառաւ,  
Մա՛յր իմ:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Ո՛վ մանկիկ, դու պիտի ինամես մայրդ, պիտի սիրես զանի, երբ պառաւ է, ինչպէս որ նա այսօր քեզ կը ինամէ և կը սիրէ Բայց պէտք չէ որ դուն այնքան երկար ատեն սպասես, որպէս զի յայտնես անոր քու երախտագիտութիւնդ. պզտիկութենէդ սկսեալ կրնաս վճարել քու սիրոյ պարտքդ. հիմակուընէ եղիր բարի, հեզահամրոյր, հնազանդ, աշխատող:

ՀՐԱՀԱՆԳ. — Ի՞նչ են հետեւեալ քառերուն հակահիշները, գիշեր, խաղաղ, հսկել, կշտամբել, անոյշ, սխալել, չար, զգոյշ, անկեղծ, մտերիմ, բարիք, սիրելի, պառաւ:

**ԲԱՌԳ.** — Կշտամբել, վարձուէլ:

28. — ՊԶՏԻԿ ՓԻԼԻՄՈՆԸ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Պզտիկ Փիլիմոնը շատ հիւանդ էր և կ'ըսէր ինք թէ պիտի մեռնէր: Խեղճ հայրը կ'աղաչէր անոր որ այդ բանը չըսէ, իսկ մայրը քիչ մը անդին կը պահուըտէր լալու համար, երկուքն ալ կը շանային հաւատալ թէ նա չպիտի մեռնէր, և այնպէս կը հաւտացնէին տղուն:



Եթէր տարեկան էր: Բոլորովին խարտեալ, վարդագոյն, վառվրուռն, և ճնճողուկի մը պէս զուարթ. երեք

չարաթէ ի վեր անդ ունէր. երեկոյ մը թաղին դպրոցէն բերուած էր նա, գլուխը ծանր և ձեռքերն ալ շատ տաք: Եւ անկէ ի վեր հոն էր, անկողինը, և երբեմն զառանցելու ատեն կ'ըսէր, նայելով դէպ ի իր փոքրիկ նոր կօշիկներուն, զորոնք դրած էր մայրը խնամով անկիւնը տախտակի մը վրայ: «Պզտիկ Փիլիմոնին կօշիկները թող նետուին, պզտիկ Փիլիմոն զանոնք ալ չպիտի հազնի. պզտիկ Փիլիմոնը դպրոց չպիտի երթայ, երբեք»: Այն ատեն հայրը կ'ըսէր, կը պոռար. «Չե՛ս լուեր»: Եւ մայրը կ'երթար անոր սնարքին կողմը իր գլուխը կը ծածկէր բոլորովին տեղուհեամ, որպէս զի պզտիկ Փիլիմոնը իր լալը չլսէ:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Շատ անգամ տղաք իրենց ցաւը կը չափազանցեն որպէս զի աւելի ի դուք շարժեն. Բայց պզտիկ Փիլիմոնը յանցանք չունի. նա ըսածը չէր գիտեր: Բայց դու եթէ հիւանդ ըլլաս, մտածէ՛րու ծնողացդ անհանգստութեան վրայ: Ազէկ հիւանդ եղիր, այսինքն համբերութեամբ դիմադրէ ցաւերուդ, որպէս զի ծնողքդ աւելի մտահոգութիւն չունենան:

**ՀՐԱՀԱՆՔ.** — Հետեւեալ ամականներուն քով մէյմէկ գոյական դրէք. խարտեաշ, վայրկազոյն, վառ.վառն, գուարթ, երեք, ծանր, տաք, նոր, պզտիկ. տեղոյն:

**ԲԱՌՔ.** — Խարտեաշ, Բեդէ. — ուվուռն, ալիսի:

29. — Օ Ր Օ Ր

**ԲՈՎԱՆԻՆԱԿՈՅԻՆ.** — Մայրը կ'երգէ. և անոր երգերուն ազդեցութիւնը շատ զորաւոր է:

Օրօր, ազուոր մանչս, յօրօր,  
Քեզ մեծցընեմ օրէ օր,  
Հօրդը նրման մարդ եղիր,  
Տունըդ քեզմով տեսնէ օր:

Ծոցիկըս տաքուկ օրրան,  
Մազերըս ծածկոց վըրան,  
Մըշիկ, մըշիկ մըրբափէ,  
Պառկինք բերան առ բերան:

Գիշերն եմ քովիկդ արթուն,  
Ձիս կը գտնես քովդ առտուն,  
Քեզի մէկտէն չեմ հաւտար,  
Սրտիս սէրն ես, կեանքս ես դուն:

Ո՛վ որ տեսնէ, թող գատէ,  
Մանչուկըս հարազատ է.  
Կունտ ու կըլոր նոնոշիկ,  
Հազարին մէջ մէկ հատ է:

Միեւան Յովհաննէսեան

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Վերոգրեալ տողերն մօր սէրը կը յայտնեն ի խարտեանքով, որոց համեմատ իցիւ թէ պատրաստուի տղան:

ՀՐԱՀԱՆԳ. — Հետեւեալ բառերէն բառեր շինեցէք. հայր, տուն, քերան, գիշեր, արթուն, սեր, դատ:

### 30. — Օ Ր Ի Ո Ր Դ Փ Ա Փ Ո Ի Կ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ .

— Տեսէք թէ ինչ կը մտածէ  
ծոյլ աղջիկը: Նա՛ որ չուզեր  
ունենալ ապագայի հոգը,  
եզո՞ւկ է այնպիսոյն:

Սորվէ՛ ու սորվէ՛, ուսմունքն ի՛նչ ընեմ,  
Ըզգեստ չէ հագնիմ, անուշ չէ ուսեմ:  
Ի՛նչ մը դազգիներէն և դաշնակ ու պար...  
Լա՛ւ, ի՛նչուս պէտք է այդ խորունկ գրաբար:  
Քարտէզի վրայ աշխարհ մը տեսնել,  
Քակը պարսոյ՝ տոկոսներ հաշուել,  
Կէս կուշտ կէս նօթի, գիտնալ թէ սփռաթի  
Կուգայ լաւ դորձան, կարագ կամ գինի,  
Չափել կեղծ ձեւով մօտա ըզգեստներ,  
Երբ սընտուկիւնըս կըռնակս եմ առեր:  
Ես աշխարհի մէջ քանի՞ օր ունիմ,  
Եւ ի՛նչ հարկ է որ այսչափ չարչարուիմ:

Այսպէս կը խօսէր օրիորդ Փափուկ  
Եւ դըպրոցն իրեն բանտ կուգար անձուկ:  
Նա գնաց եկաւ, և ոչինչ ուսաւ,  
Դաշնակն իսկ իրեն շատ դժուար եկաւ.  
Մերթ դէրքը բացաւ, աչքերը գոցեց,  
Դասարանին մէջ յաճախ մըրափեց.  
Միշտ խաղաց խնդաց, կերաւ ու խըմեց,  
Եւ յետոյ աղուոր քունիկ մը քաշեց:

«Տանձ էր նէ հասաւ, խնձոր՝ կարմրեցաւ»  
Մեր Փափուկին ալ տարիքը լեցաւ:  
Վերջի քննութեանց՝ դարձեալ բացակայ.  
Մըրցանակաց օր՝ սուտ հիւանդ կ'ըլլայ:  
Ի՛նչ ցաւ ծնողաց, վա՛յ չար անպիտան...  
Յետոյ զղջաց շատ, բայց օրերն անցան:

Յ. Ոսկան

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Փոքրիկ աղջիկներ, մի մտածէք օրիորդ Փափուկին նման, եթէ չէք ուզեր ձեր ծնողը վշտացնել:

### 31. — Մ Տ Ա Յ Ա Ր Թ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ . — Յիրաւի այս փոքրիկ տղան դիւցազն մ'է, որ իր կեանքը վտանգի կը գնէ իր եղբայրն խղղուելէ ազատելու համար: Վսեմ է իր արժնամտութիւնն՝ որով վայրկենապէս ջուրը կը նետուի և կը խլէ իր եղբայրը վերահաս մահուանէ:

Օր մը փոքրիկն Վարդգէս, որ հազիւ չորս տարե-

կան էր, կը պտտէր գետակի մը եզերք իր երեք եղբայրներուն հետ՝ որոնք իրմէ մեծ էին : Փոքրիկը սխալ քայլ մը առաւ և ինկաւ ջուրին մէջ՝ որ խորունկ և սրընթաց էր. մեծ եղբայրը սկսաւ օգնութիւն պառայել և վախէն ծուներ դարաւ . երկրորդը տուն վազեց մայրը կանչելու : Բայց երրորդը Յակոբ, որ եօթը տարեկան էր, ջուրին մէջ նետուեցաւ և իր պղտիկ եղբայրը աղատեց :

ՀՐԱՀԱՆԳ. — Ի՞նչ կ'ըսուի չորս տարեկանին՝, գետի եզերք՝, մեծ եղբայր՝, ծուներ դրաւ՝ :

### 32. — ԾԱԾԱՆՆ ԵՒ ԻՐ ՊԶՏԻԿՆԵՐԸ



ՅՈՎԱՆԻԱԿՈՒԹԵՒՆ . — Գետոյն

խորը ծածան մայրիկ կը յանձնարարէր պղտիկ ծածաններուն, որպէս զի եզերքին մօտ չերթան՝ ձկնորսին որս չերթալու համար : Բայց ողորումներու եղանակն էր, ծածանները միայն երկինք և շուր կը տեսնէին, և կը կարծէին թէ այլ եւս ձրկնորսներ չկան . կը ծաղրեն իրենց մօր խրատները և հեռուն կ'երթան : Սակայն ծածան մայրիկ իրաւունք ունէր, ջուրը կ'իջնէ և ձկներն ցամաքը կը մնան, ուր կը բռնուին և կերակուր կ'ըլան :

« Ըզգուշացէք, եզերքին մօտ մի՛ երթաք,  
« Այլ պահուեցէք գետոյն յատակ .

« Մահաբեր ուռկանն թող ձեզ տայ վախ,  
« Կամ ձեզ բաղէն չընէ մատաղ » :

Այսպէս խօսէր իրեններուն՝ ծածան մայրիկ :

Ասոնք դեռ փոքրիկ, ո՞վ կ'ընէ մտիկ :

— Ահա ապրիլ ամիսն էր,

Կարծր սառեր և ձիւներ

Ջեփիւններէն հալէին,

Լեռներն ի վար իջնէին :

Գետն անոնցմով փրփրբրալից կ'ուռեհար

Եւ կ'ողողէր շուտով ամէն դաշտավայր :

— « Վա՛յ վա՛յ, պուան ձկներ փոքրիկ,

« Ի՞նչ կ'ըսես դուն, ցընդա՛ծ կրնիկ .

« Կարթ կամ թակարդ մեզի ի՞նչ հող,

« Մենք բնակիչներ մրկոս ծովուն չե՛նք արդեօք :

« Լոկ ծով, երկինք, սե՛ս, կ'երեւին .

« Ջրոյն տակ ծառերն ալ ծածկուին :

« Հիմայ տիրենք մենք ամէն տեղ .

« Այս՝ ընդհանուր է ջրհեղեղ » :

— « Ատոր մ'աւտաք, կ'ըսէ մայրիկն այն պառաւ .

« Ծուտով ջուրը քաշուի և միայ հող ու կաւ :

« Մի՛ հեռանաք, և արկածէ վախնալով

« Ջրոյն խորը դուք մընացէք ապահով » :

— « Վա՛յ քեզ, կ'ըսեն ձկներ, կրկնէ՛ անպատճառ

« Միեւնոյն ճառ,

« Մընաս բարո՞վ . . . տեսնենք հիմայ մեր նոր կալուած » :

Այսպէս կ'ըսեն մեր ձկնիկներ շրւարած .

Ահա կ'երնեն գետոյն խորէն,

Երկիրն ծածկող ջուրերուն մէջ կը վազեն :

Բայց ի՞նչ արդեօք կը պատահի,

Հոն ձկներուն մահ սոսկալի :

Կ'որսայ գիրենք կարթ կամ ուռկան .

Անհնազանդիկն՝ միշտ պատժներ այսպես կան :

**Ֆլորիան**

**ՔԱՐՈՑԱԿԱՆ.** — Պզտիկ ծածանները կը նմանին շատ մը տղաքնե-  
ներու . կը մեծնան և գիրենք կարող կը կարծեն . երբ ծնողքները իրենց  
խելացի խորհուրդներ կուտան, կ'անաստեն . Ունայնամտութիւնը ան-  
մտութեան կ'առաջնորդէ . Տղաք անհնազանդ կը գտնուին և վերջապէս  
պզտիկ ծածաններուն պէս կը պատժուին :

**ՔԱՌ-Ք.** — Կարթ , յո՛ւ՛ — ր-ու-ը — ք-քէ + ( օլթա ) : — Թակարդ ,  
յո-ը-լ :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Վերագրեալ բառերուն հոլովները որոշեցէք :

**33. — ՊԱՏԻ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ**



**ՔԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ.** — Դասա-  
րանի մը մէջ ենք . աշակերտ մը ծանր  
յանցանք գործած է . հրն է սակայն . Բն  
փոթ, Պերես ջորեակներ պահած է ,  
որոնք կը բզզան , և ինք կը խնդայ : —  
Ուսուցիչն՝ որոյ մասին յարգանքի Պերու-  
թիւն գործած են , շատ վշտացած է .  
չգիտնալով՝ թէ ո՞վ է յանցաւորը , այդ  
պատճառաւ ամբողջ դասարանը կը պատ-  
ժէ . եթէ յանցաւորը յայտնուի , այդ պատիժը պիտի վերնայ : Աշակերտ-  
ները Բն ընելու են , յանցաւորը Բն ընելու է :

Խնդրոյ մ'համար ըզգալով ծանր թշնամանք  
Եւ չկրնալով գտնել գործողն այս յանցանք ,  
Վարժապետ մը պատժեց ամբողջ դասարան :  
Բայց նա գիտէր թէ այս կերպով միմիայն ,  
Վարժապետներ յանցաւորը կը գտնեն :

« Երբ յայտնուի , կ'ըսէ , միւռներն ազատ են » :  
Չը գանգատիր մէկըն այս խիստ վարմունքին ,  
Լուռ կը մընան հոն անմըտունչ ցաւագին :  
Սնոնց անձնուէր այս ընթացքին և սակայն  
Յանցաւորը պիտի ըլլա՞յ անարժան .  
Ո՛չ , վասըն զի գողը ըզգալով ուժգնապէս  
Նա ոտք կ'եղնէ և քաջութեամբ կ'ըսէ . « Ե՛ս » :

**ՔԱՐՈՑԱԿԱՆ.** — Տղաքներն սլ չափահաս մարդոց պէս իրենց պա-  
տիւն և հպարտութիւնն ունին : Մեր դպրոցականն'րն իջաւունք ունին  
պատժելու յանցաւորը . պէտք է աւելի պատժուիլ քան թէ ընկերը մատ-  
նել : Բայց բուն յանցաւորը կ'ըսէ . « Ես եմ » : Որովհետև վատութիւն է որ  
իր տեղ ամէն աշակերտներ պատժուին : Նա պիտի պատժուի , բայց պիտի  
յարգուի իր ընկերներէն , և նոյն իսկ իր ուսուցչէն :

**ՀՐԱՀԱՆԳ.** — Ո՞րոնք են սեռի խնդիրները , ծանր բշտամանք  
զգալով , ամբողջ դասարանը պատժեց , յանցաւորը կը գտնեն :

**ՍՈՒՄ.** — Յանցանքը խոստովանիլը կիս մը անուման արժանա-  
նայ է :

### 34. — ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՂՈՑ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Ամէն դպրոցականներ պէտք է մտքերնին պահեն սա հետեւեալ խրատները:

1. Ամէն առաւօտ, արեւուն լուսով  
Իսկոյն անկողնէդ դուրս պիտի ցատկես .
2. Երեսդ ու ձեռքերդ՝ առատ պաղ ջրով  
Պիտ' անհրաժեշտ լըւաս ու սրբես .
3. Նոյն օրուան դասերդ՝ ուշագիւր մըտքով  
Պիտի վերջատին հեգես ու սերտես .
4. Յետոյ անդանդաղ և ուրախ դէմքով  
Ուղղակի պիտի դպրատուն վազես .
5. Հոն, ահնածանօք և անկեղծ սիրով,  
Պիտի վարժապետդ յարգես ու պատուես .
6. Հընազանդութեամբ, անդուլ, անխըռով  
Անոր պատուէրներն պիտի կատարես :
7. Եւ բընաւ երբէք՝ ձայնով ու խօսքով՝  
Չը պիտի դասին խանդարում առթես .
8. Տեսրակ ու գրքերդ ալ՝ մեծ խընամքով  
Պիտի անալարտ և մաքուր պահես .
9. Եւ քեզ բարեկամ լաւ որոշելով՝  
Բարի տըղոցմէ միայն պիտ' ընարես .
10. Ամէն իրիկուն՝ լըռիկ ու շուտով  
Դպրոցէն շիտակ տուն պիտի դիմես :

Ազիւ. Փանոսեան

**ԲԱՐՈՑԱԿԱՆ.** — Դպրոցականներն կանուխէն թող սովին իրենց կենաց կանոններ դնել և անոնց համեմատ երթալ:


### 35. — ԵԶՈՎԼՈՍ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Եզովրոս խեղճ, պզտիկ, տղեկ և սապատող գերի մ'էր, բայց այնչափ խելացի էր որ զիտէր դժուար կացութենէ մը ելնել աղէկ խօսք մը ընելով:

Եզովրոս, զոր իր Քսանթոս տէրը տեղ մը խրկած էր, ձամբուն վրայ պատահեցաւ քաղաքին կառավարիչին . սա հարցուց անոր թէ ո՞ւր կ'երթայ: Եզովրոս մտազըրադութեամբ և կամ ուրիշ պատճառով պատասխանեց թէ չէր գիտեր: Կառավարիչը այս պատասխանը նախատական համարելով, զանի բանտարկելու հրաման տուաւ: — Երբ ոստիկանները զանի կ'առաջնորդէին, « Չէք տեսներ, կ'ըսէ նա, թէ շատ լաւ պատասխանեցի. Գիտէի՞ թէ հոս պիտի առաջնորդուիմ »: — Կառավարիչը զանի բանտէն արձակել տուաւ և զՔսանթոս շատ երջանիկ համարեց, որովհետեւ այսպէս խելացի գերի մը ունի:

**ԲԱՐՈՑԱԿԱՆ.** — Յոյներն եզովրոսի վրայ շատ պատմութիւններ հնարեցին, ճիշդ վերինին նման, որով այս դասը կ'ելնէ թէ. « Չգատենք մարդիկը իրենց կերպարանքէն »: Անոնք՝ որոց վրայ շատ անգամ կը խնդանք, մենէ աւելի խելացի են, թելիք աւելի օգտակար և քան գեղեցկուրիւնը:

**ՀՐԵԶԱՆԳ.** — Գտէք սոյն հատուածին մակրայներն եւ շղկապներն:



### 36. — ՀԱՅՐՆ ԵՒ ՈՐԴԻՆ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Դուք լսած էք որ կ'ըսուի այս ճամբորդը աշխարհի ծայրը գնացի Բայց արդեօք աշխարհը ծայր մը ունի: Մեր աշխարհը գնտակ մ'է, և գնտակը ծայր չունի: Ճանճ մը՝ որ միշտ ուղղակի երթար նարնջի մը վրայէն, պիտի հասնէր իր մեկնած տեղն: — Տեսէք թէ ինչպէս պտոյտի մը ատեն հայր մը իր տղուն կուտայ աշխարհագրութեան այս դասը:

ՏՂԱՆ

« Ի՞նչ կայ արդեօք բըրլոյն ետին ,  
Որ կը ծածկէ մարգագետին ,  
Սորվեցո՛ւր ինձ կ'աղաչեմ , հա՛յր » :

ՀԱՅՐՆ

« Այո՛ , այն տեղ կայ մէկ աշխարհ ,  
Հոն այս տեղի ճիշդ նըմանակ  
Կայ դաշտ , անտառ , լեռ և գիւղակ » :

ՏՂԱՆ

Հեռո՛ւն սակայն .

ՀԱՅՐՆ

Լեռներ բաղում :

ՏՂԱՆ

Անո՞նց ետե՛ւ՝

ՀԱՅՐՆ

Մով անհատնում :

ՏՂԱՆ

Մո՞վուն ետե՛ւ :

ՀԱՅՐՆ

Ափունք նոր նոր :

ՏՂԱՆ

Եւ դեռ յետո՞յ :

ՀԱՅՐՆ

Եւ քանի որ

Հեռուն երթանք , սիրո՛ւն որդեակ ,  
Պիտի կազմենք մի շըրջանակ .  
Եւ մեր մեկնած կեդրոնաւլայր  
Պիտի ըլլայ աշխարհի ծայր : »

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Գիտէք թէ ինչո՞ւ համար երբեմն կ'ըսուէք. աշխարհի ծայրը: Որովհետև աշխարհի մէկ պզտիկ մասը միայն ծանօթ էր: Ճամբորդը շուտով կը հասնէր, չէր համարձակեր ովկէանու մէջ պտըտիլ, անծանօթ և վտանգաւոր երկիրներու մէջ ճամբորդել: — Այսօր գիտուն-



ները մեզի ընծայեցին կողմացոյցը , շողին , երեսրականութիւնը . յանդուգն մարդիկ դիտեցին բոլոր աշխարհները : Աշխարհ բացուած է . ծայր չունի այն : Մտածեցէք թէ ինչ կրնար ըլլալ աշխարհացոյց մը Գրիստափոր Գոլումպոսէն առաջ , և յետոյ նայեցէք որ ինչ կը պարունակէ ձերը , և յիշեցէք թէ ի՞նչ փառաւոր աշխատութիւններու գործ են այն գիւտերն :

**ԱՌ ՌԵՍԱՐՏԻՉՍ .** — Ասկէ սկսեալ հատուածներուն ներքև չեն դրուած հրահանգները , յայց Պատուարժան Ուսուցիչք բոլ հաճիեցայովայր նշանակուած հրահանգներու համաձայն կրբութիւններ կատարել տալ իրենց աշակերտաց :

### 37. — ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ



**ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ .** — Երկու շատ խեղճ եղբայրներ ամուլ գետին մը կը ժառանգեն և զայն կէս առ կէս կը բաժնեն : Անդրանիկը կը մտածէ թէ ուրիշ տեղ ինք քիչ աշխատութեամբ ասելի պիտի շահի . իր բաժինը կը ձգէ և կ'երթայ իր բաղդին ետեւէն : Իսկ պղտիկը իր խեղճ դաշտին վրայ կը մնայ , ըսելով

ինքնիրեն «Օ՛ն ուրեմն , զայն արգասաւոր պիտի ընեն» : — Այս երկուքին ինչ պատահեցաւ

Երկու եղբայր օր մ'օրէնքի համաձայն Բարուտ , ամուլ հողն բաժնելու միացան . Ժառանգութիւն էր այն իրենց հօրեղբոր , Որ իրենց պէս կ'ապրէր աղքատ չըքաւոր : Անդրանիկը մտածեց թէ ինք ի զժ՛ւր Իր քրտինքով պիտի թրջէր հողն ամուլ .

Ուստի ուրիշ տեղ գնաց փնտուել իրեն բախտ . Բայց պղտիկը չըսաւ , « հողն է ապերախտ » : Այլ ըսկրսաւ քաջ քաջ մշակել իր տեղուանք , Տըւաւ հողոյն ամէն խնամքներ , ամէն ջանք : Երեք կամ չորս տարուան միջոց Բերրի եղաւ այն երկրին ծոց . կը սնուցանէր զինք և որդիք , Երբ կը մուրար խեղճ անդրանիկ : Մշակն ինքն է որ իր գետնին Տայ քիչ կամ շատ արժէք ու գին :

**ԲԱՐՈՑԱԿԱՆ .** — Հողագործն ևս իր որդիին ձեզ պիտի սորվեցնէ թէ աշխատութիւնը գանձ մ'է : Այս առակն ալ ձեզ կը սորվեցնէ թէ անձտութիւն է ւսոյցը ձգել անսոյցիկ համար :

**ԱՌԱՅՍ .** — Աշխատութեան պտուղն հաճոյից քաղցրագոյնն է :

### 38. — ԿԱՂՆԻՆ ԵՒ ԵՂԷԳՆ

**ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ .** — Հպարտ կաղնին կ'ըսէր եղէգին . «Կը մեղքնամ քեզ , որովհետև դուն շատ տկար ես , և ես շատ զօրաւոր եմ» : — Պզտիկ եղէգը քաղաքովարութեամբ կը պատասխանէ . «Բայց ոչ , բու կարծածիդ չափ տկար չեմ» : — Փոթորիկը վրայ կը հասնի . տեսէք պատահածն :



Օր մը կաղնին ասանկ կ'ըսէ եղէգին . « Որչափ դըժբաղդ գըտնուեր ես դուն քան զիս ,

Թեթեւ փետուրն է քեզի բեռ մ'անագին ,  
 Բարակ հովէ մը մէկէն վար կը ծըռիս :  
 Իսկ ես կարծես թէ լեռ մըն եմ չիփ չիտակ -  
 Հով փոթորիկ՝ ինչ ալ ըլլայ հակառակ ,  
 Բան չեմ սեպեր , ամենեւին հոգս ալ չէ .  
 Քեզի մըրրիկն՝ ինձ դով քամի կը փըչէ :  
 Խեղճ եղէգնիկ , դոնէ սա ցած ծառերուն  
 Որ իմ չըքիս տակն են այսչափ բազմութիւն ,  
 Դոնէ ասոնց տակն ըլլայիր կ'ըսէի ,  
 Որ հովերէն ըզքեզ սիրով պահէի :  
 Բայց դուն , ախոս , լըճերու քով կը ծընիս ,  
 Հովի բերան՝ ցած տեղ կ'ապրիս կը մեռնիս .  
 Ալ ինչ ըսեմ , բայց քեզ ալ չեմ մեղադրեր ,  
 Քու ճակատիդ գիրն ալ ատանկ է եղեր » :  
 « Ատ քու սըրտիդ աղէկութիւնն է , պարոն ,  
 Որ ցաւակից կ'ըլլաս ինձի պէս խեղճուն .  
 Բայց հոգ մ'ընեմ , ես հովէն շատ վախ չունիմ ,  
 Որչափ սաստիկ փըչէ՝ ծըռիմ կ'աղատիմ .  
 Իսկ դուն ինչուան հիմա իրաւ դէմ դըրիր ,  
 Բայց նայինք վերջդ ինչպէս կ'ըլլայ , լաւ ուշ դիր »  
 Խօսքը բերանն էր՝ մէյ մ'ալ ինչ կը տեսնես .  
 Երկընքին մէկ ծայրէն փրթաւ կրակի պէս  
 Մէկ փոթորիկ մը որ նըմանն եղած չէր :  
 Ծառն ը'հ չընեմ , եղէգը վար կը պառկէր :  
 Քանի՛ դընաց՝ հովն ու քամին կատղեցաւ .  
 Ելաւ կաղնին , ու արմատով վար ինկաւ ,  
 Ան կաղնին որ գլուխն ամպերուն կը դըպչէր ,  
 Ու ոտուքներն ինչուան դըժոխք էր հասեր :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Անոնք որ ամէն առթիւ իրենց յատկութեանց վրայ կը պարծենան և իրենց ընկերները կ'ուզեն նուաստացնել, հպարտներ են, և հպարտութիւնը այնպիսի մեծ թերութիւն մ'է՛ որ անհասնողութիւ կ'ընէ այդ ատեն բանուղիները :

**ԱՌԱՄ.** — Բարձր սարին բռնն ու քաղն շատ կ'ըլլայ :

39. — Մ Ա Յ Ր Ե Ի Տ Ղ Ա Յ

**ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ.** — Շատ պզտիկ տղայ մը իր մօր ծունկերուն վրայ նստած է . անոր աչքերը կապոյտ են , շրթները վարդագոյն . իր պզտիկ բազուկները մայրիկին վիզը անցուցած է : Բայց գիտէք թէ մայրիկը այս ամենէն աւելի ինչ բան կը սիրէ . իր պզտիկին սիրող բարի սիրտը :



Կ'ըսէ մայրիկն , « Ունիմ երկու  
 « Ծըծմոր կապոյտ , չքնադատես ,  
 « Ոյց վրայ՝ ծծմորք մեր դաշտերու  
 « Կը նախանձին , ինչ են , գիտե՞ս » :  
 Տղան ժպտուն՝ կ'ըսէ , « Գիտեմ յիրաւի  
 « Քու ծծմորներդ են իմ երկու աչք ծաւի » :  
 « Միշտ ես ունիմ թարմ ու կարմիր  
 « Ծաղիկ մը որ խօսիլ գիտէ ,  
 « Զիս իրեն քով կանչել , ժպտիլ ,  
 « Ահա ուրիշ հրաշք մ'ալ այս է » :

Տղան կ'ըսէ մտտեցնելով շրթունք իւր ,  
« Ահա ծաղիկդ գիտէ տալ քեզ և համարյր » :

« Ես գեղեցիկ ունիմ մանեակ ,

« Որ ոսկեղէն չէ այն երբեք .

« Բայց աւելի կ'արժէ ըստակ ,

« Վըզէս կախեմ գիշեր ցորեկ » :

Կ'ըսէ տղան , « քու մանեակըդ անկասկած ,

« Երկու պըզտիկ բազուկներովս են շինուած » :

« Ուրիշ բան մը ունիմ սակայն ,

« Ես անկէ զուրկ , ա՛հ , մեռնիմ թող ,

« Թէ ունենամ ինձ սեփնական ,

« Մանեակ , ծծմոր , ծաղիկ խօսող » :

Տղան կ'ըսէ յուզուած սիրով երջանիկ ,

« Իմ սիրտս է այդ , անուշ մայրիկ » :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Այժմ դու մեծ ես , դասի կ'երթաս . Կ'ուզես որ միշտ մայրդ զիտնայ թէ ինք քու բարի սիրտդ ունի . Պէտք չէ գոհ ըլլաս միայն զանի գգուելով . ասի միայն քու շատ պզտիկ եղած ատենդ պէտք էր : Զիմայ դուն ուրիշ բան կը պարտիս անոր . եղիտ ինազանդ , աշխատող :

**ԲԱՌՔ.** — Ծծմոր , կապոյտ ծաղիկներով տունկ մը , որ ցորեններուն մէջ կը բուսնի . Տճ . Մ-Վ : Ինչպէ՞տէր շէշէ : — Մանեակ , վզի զարդ :

### 40. — ԾԻՄԱՌՆԵՐՈՒ ԲՈՅՆ

**ԲՈՎԱՆՔԱԿՈՒԹՅՈՒՆ.** — Տղայ մը Յուշոց ձագերով լի բոյն մը կը գտնէ . Ինչ կ'ընէ . նա զանոնք կը Յուցնէ , կարծելով թէ անոնց մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ : — Պզտիկ Յուշունները շատ զոհութեամբ կը մեկնին . բայց անոնք ոչ կրնան Յուշիլ , և ոչ ալ անանիլ : Ամէնքն ալ կը սատակին :



Ծիծառներու բունիկ՝ տղայ մ'էր գըտեր .

Չուզեց անոնց ըլլալ ինք տէր ,

Այլ թող արւաւ դէպ ի եթեր .

Ինեղճ փոքրերուն թեւերն չունին դօրութիւն .

Եւ օդին մէջ ձագերն մատաղ

կը թըռչըտին ուրախ ուրախ .

Պարդեն թըռիչ մէկ և երկու ,

Բայց երրորդին վտանգ անարկու :

Կը ջախջախուի մէկն ինչալով ,

Միւսն անօթի մեռնի չուտով ,

Եւ մի ուրիշն կ'ուտէ կատուն .

Վերջապէս և ոչ մէկ թըռչուն

Պըրծի ձեռքէն անգութ մահուն :

Թըռչունք թուշիլ դիտեն միայն ,

Բայց թող փետուր նախ ունենան :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Երբեմն տղայք կը ցաւին թէ չեն կրնար գալ , եր-

Ուալ, իրենց ուզածն ընել: Չանձրոյթ կ'զգան իրենց ծնողաց, իրենց վարժապետին հնազանդելու: — Տղաքներ, յիշեցէք այս ծիծեռնակները, դուք այս փոքր Պուչուններուն նման էք. հայրենի տունը ձեզի համար քաղցր և ասպածով բոյն մ'է:

### 41. — Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ. — Ամէն բանի ստեղծիչն Աստուած է. ամէն բան նա կը սրբազանէ. սիրենք միշտ զանի:

Յկէ՛ք, տեսէ՛ք սա բացուած վարդը. նայեցէ՛ք, ի՛նչպէս կ'երերայ իր կանաչ կապած ձգին վրայ: Ասիկայ է ծաղիկներու թագուհին. թերթերն են կարմրուկ, տեսքն է աղնիւ ու գեղեցիկ. հոտը բունք է օդուն մէջ: Բայց սա վարդը ընտղն ա՛լ աւելի գեղեցիկ է, ամէն սրտի սիրելի է:

Առիւծը ամէն կենդանիներէն ուժով է. երբոր իր ծակէն ելնէ ու պոչը չարժելով սկսի մռնչել, արածող կենդանիները վախերնէն կը թողուն դաշտը, դազանները անսպաս կը փախչին: Ուժով է առիւծը. բայց իր ստեղծողը աւելի զօրաւոր է. ինքը ուզածին պէս ամէն մարդու կեանքը չափեր է, ու չըկայ մէկն որ անոր բարկութենէն զգատի՝ յանցաւոր եղած ատենը:

Պայծառ է արեւն՝ երբոր անամպ երկընքէ ծագի. երբոր փայլուն ճամբովը առաջ կու գայ՝ բոլոր երկիրս իր լուսովը կը լեցընէ: Բայց աւելի փառաւոր է ան՝ որ զարեւը ստեղծեր է. ինքն ամէն տեղ կը մտնէ, իր հրեսի

լոյսն իր ամէն ստեղծուածները կը լուսաւորէ, ու ինքը գիշեր չունի. անոր անունն է Աստուած, իր գործն է աշխարհքս. ինքն ալ իր ամէն գործէն վեր է. ինքն է գեղեցկութիւն, զօրութիւն ու կարողութիւն:

Զ. Գ. Ալիօսոս

ԲՈՐՈՅԱԿԱՆ. — Կատարենք Աստուծոյ կամբը, ըլլանք սուրբ, ուղիղ և արդար:

### 42. — Ա Ղ Ո Ւ Է Ս Ե Ի Ա Յ Ծ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ. — Երկու բարեկամներ, չար և խորամանկ աղուէն ու անմիտ և դիւրահաւան այծն ջրհոր մը կ'իջնեն չուր խմելու համար: Ի՞նչպէս ենն: Աղուէսը կը գտնէ միջոց մը՝ որուն վրայ շատ կը զարմանայ այծն: Երբ միանգամ աղուէն կ'եկնէ, կը ծաղրէ իր ընկերը և զանի հոն կը մողու:



Պարոն Աղուէսն և Այծ աղբար Մէկտեղ ելան ի ճանապարհ. Աղուէսին ի՛նչ վարպետորդի Ըլլալն աշխարհք լաւ գիտէ:

Իսկ մէկալին ի՛նչ ըզեղի  
Տէր ըլլալն՝ ո՞վ չըզիտէ :  
Ճամբան երկար քաղելէն  
Տանջըւեցան ծարաւէն .  
Երբոր ջրհոր մը հասան՝  
Առանց չորսգին նայելու՝  
Մէկէն ի մէկ մէջ մըտան  
Անուշ անուշ խմելու :  
Մէկ մ'որ աղէկ կըշտացան՝  
Նոր սիրտ նոր ուժ ըստացան ,

Կարծես երկու օր ու գիշեր

Թէ ճամբանին դեռ երկարէր ,

Ասոնք ջուրին նոր ուժով

Պիտ'երթային ապահով :

Բայց դու եկ տես ի՛նչ արգելք

Կը խափանէ իրենց ելք .

Խոր գուրըն են ջրհորին՝

Շատ վեր մընայ ճամբանին :

Դարձաւ Աղուէսն դէպ ի Այծ ,

Որ բանը դեռ չէր հասկըցած .

— «Իմ բարեկամս , ըսաւ , ի՛նչպէս

Պիտի ելնենք այս ջրհորէս .

Միայն խմելով չի լըմընար .

Պէտք է տեսնել մեր ճամբուն ճար» :

Եւ քիչ մը լուռ կենալով ,

Որպէսզի լաւ մ'Այծը խարէ ,

Վըրայ բերաւ խընտալով ,

Իբրեւ թէ նոր կերպ գըտեր է .

«Միտքըս աղէկ հընարք մ'եկաւ ,

Եթէ մըտիկ յնձ որ ընես՝

Բաներնիս խիստ յաջողի լաւ ,

Շուտով կ'ելնենք մենք ջրհորէս :

Սա առջեւի ոտքերդ վերցուր ,

Ու դէպի պատը կըռթընցուր .

Գըլուխդ քիչ մ'առջեւ ծըռէ ,

Իսկ կոտոշներդ ալ վեր տընկէ :

Ես կըռնակէդ ճանկըռթելով ,

Կոտոշներուդ վրայ կ'ելնեմ ,

Ու հոնկէ մէկ վեր դատքելով ,

Մէկ մը որ ինքզինքս դուրս նետեմ ,

Ա՛լ անկէ վերջ կ'ըլլայ քու բանդ ապահով ,

Վեր քաշեմ գքեզ որ և իցէ նոր կերպով» :

Բայց եթէ ի՛նչպէս ,

Ձայն չըսաւ Աղուէս :

«Ահա մօրուքըս քեզ վըկայ ,

Այծը պոռաց արմընալով ,

Բուն խելքին զանձն է քուկին քով ,

Ճարտարութեանդ չափ չըկայ :

Քեզի շիտակ խօսք մը զրուցե՞մ .

Ճըշմարտութիւնն ի՛նչու ծածկեմ .

Թէ քեզի հետ չըլլայի

Անշուշտ ես հոս մնայի» :

Ի՛նչ և իցէ շատ չըքըչեց ,

Աղուէսն հորէն զինք դուրս նետեց :

Այլ տես թէ ի՛նչ անգութ սըրտով ,

Մահու բերան զԱյծը թողլով ,

Կըծու կըծու խօսքեր զրուցեց ,

Ու իր ճամբան առաւ քալեց ,

«Երկինքն, ըսաւ, թէ քեզի՛  
 Փոխան բըրգեզ կըզակի  
 Կըտոր մը խելք տուած ըլլար,  
 Մէկէն չէիր հոտ իջնար .  
 Յուսանք՝ ասով խելք կը սորվիս,  
 Միայն թէ ողջ հորէն պըրծիս » :

Առակս ըլլայ օղ ականջիդ,  
 Զըրած՝ գլխըջ մտածէ գործիդ :

Թարգմ. Հ. Գեորգ Հիւրմիւզ

Լաճաքէն

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Այս այծը անմիտ մ'է, որ կ'իջնէ ջրո՞րը առանց մտածելու թէ քնչպէս պիտի կրնար ելլել, Բայց ամէն բանէ առաջ անմիտ մ'էր որ իր ընկեր և բարեկամ ընտրեց խորամանկ ալուէսն, Մի նմանիք անոր և ձեր բարեկամութիւնը մի տաք անոնց՝ որ զայն չարաչար կը գործածեն :

### 43. — ԱՇԽԱՏԱՆՈՑԻՆ ԵՐԳԸ



**ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ.** — Մտքերնիդ բերէք աշխատանոց մը՝ ուր շատ մարդիկ կ'աշխատին. անոնցմէ մին իր գործը կատարելով հանդերձ կ'երգէ և կ'ըսէ. Նոյն ինքն Աստուած մեզի տուած է աշխատութիւնը. Ուղղութիւն մը չէ այս՝ որ մեր վրայ դրուած է, այլ Աստուծոյ մէկ գեղեցիկ պարգեւն է: Աշխատող մը աւելի երջանիկ և աւելի պատուաւոր է քան թէ անգործ հարուստ մը: Երեկոյին, ընտանեկան սեղանին վրայ աշխատողն ուրախ է, որովհետեւ ինքնիրեն կ'ըսէ. «Իմ ընտանեացս հացը ես շահեցայ» :

— Երբ ինքն Աստուած տուաւ մարդուն՝

Անոր բաժին աշխատութիւն,  
 «Այդ է, կ'ըսէ, դանձ թանկագին,  
 Բիւրիցըս լաւ քան թէ սակին» :  
 Անդուլ անդադար գործենք, օ՛ն, ընկե՛րք,  
 Յետոյ կը հանգչինք, երբ կ'ըսենք մեր երգ :

— Զիկայ հաճոյք անաշխատ ընաւ .  
 Բախտ մեզ պարապ ժամիր չտուաւ :  
 Բայց անոնք՝ որ երկար ճգնին,  
 Են գոհ հըպարտ բոլորովին :

Անդուլ անդադար գործենք, օ՛ն, ընկե՛րք,  
 Յետոյ կը հանգչինք, երբ կ'ըսենք մեր երգ :

— Երեկոյին ճաշի պահուն  
 Մեզ հետ նըստի ուրախութիւն :  
 Աշխատողին կ'ըսէ մի ձայն .  
 «Շահած հացդ է խիստ պատուական» :  
 Անդուլ անդադար գործենք, օ՛ն, ընկե՛րք,  
 Յետոյ կը հանգչինք, երբ կ'ըսենք մեր երգ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Սիրենք աշխատութիւնն՝ որ մեզ կուտայ պատիւ, դրամ և ուրախութիւն: Զուարթուեամք աշխատիք, և այն ատեն աշխատութիւնը մեզի թեթև պիտի երեւի:

**ԱՌԱՄ.** — Աշխատութիւնն իր ետեւն կը բերէ ամեն դիւրութիւն, առատութիւն և բարիք:

### 44. — ԿԱՄՔԻ ՈՅԺ. — ԷՏԻՍՈՆ

ՌՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ամէն տղու օրինակ կրնայ ըլլալ էտիսոն, որ շատ խոնարհ վիճակէ մը բարձրանալով ամենուն զարմանքին արժանի եղաւ :

Տղաքնե՛ր, բնա՛ւ մի՛ ըսէք. « Ի՞նչու աշխատինք, ի՞նչ բանի կը ծառայէ սորվիլ. խեղճ արհեստաւորի մը զաւակ ենք, կամ մշակ մը և կամ գործաւոր մը պիտի ըլլանք »: Ո՛վ կրնայ գուշակել թէ ապագան ի՞նչ պահած է ձեզ, կթէ դուք մշակէք ձեր միտքը և մանաւանդ եթէ դուք ձեր կամքը այնպէս կրթէք որ այն անասան մնայ. կամքը մտրդն է: Խորհրդածելով կարդացէք այս պատմութիւնը: Կամքի գորութեան ամենէն ազդու օրինակն է այս:

1847ին կը ծնէր Թովմաս Էտիսոն Ամերիկայի մէկ փոքր քաղաքին մէջ: Իր հայրն այնչափ աղքատ էր որ տղան միայն ութը շաբաթ կրցաւ դպրոց յաճախել: Բարեբախտաբար նա ունէր խելացի և ուսեալ մայր մը, որ իր բոլոր ջանքերն ի գործ դրաւ իր գիտցածը անոր սորվեցնելու:

Երբ տասը տարեկան եղաւ Էտիսոն, պատմական կարեւոր գրքեր կը կարդար. բայց մանաւանդ հռանդով կը սորվէր տարրագիտութեան և բնագիտութեան գրքուածքներ, զորն որ կարենար գտնել: Երբ տասներկու տարեկան եղաւ, ստիպուեցաւ ապրելու համար աշխատիլ: Առանց վարանելու սկսաւ լրագիր ծախել և սիկառ՝ Ամերիկեան երկաթուղւոյ մը գծին վրայ: Իր գործերը այնչափ աղէկ կ'երթային, որ առաջին ամիսներէն

սկսեալ չորս օգնականներ աւելցուց: Տարւոյն վերջն, այն ատեն հազիւ տասներեք տարեկան էր, իր հօրը, զոր շատ կը սիրէր, յանձնեց երկու հազար տօլար (1000 Ֆրանք) իր աշխատութեան միակ պտուղը: « Այս եղաւ, կ'ըսէ, կենացս առաջին ուրախութիւնը »: Էտիսոն իր աշխատութիւններուն հակառակ շարունակ կը սորվէր, կարդալով և դիտելով. շատ մը գաղափարներ ստացած էր և սորված էր զանոնք փորձել: Հիմնեց լրագիր մը, զոր ինք խմբագրեց և տպեց փայտաշէն փոքրիկ մամուլով մը, կառախմբու երթեւեկութեան ատեն: Իր լրագիրը յաջողեցաւ, բայց տարրագիտութեան և բնագիտութեան համար ունեցած ճաշակը երթալով կ'աճէր. երկաթուղեաց կառախմբի մը մէջ իրեն տպագրական վակոն մը կազմակերպեց, բայց տարրագիտական անյաջող փորձի մը պատահարը զինք զրկեց իր սենեկէն և կառախմբի պետը բարկանալով՝ ճամբուն վրայ նետեց տպագրիչ խմբագիրը իր գործիքներով մէկտեղ:

Էտիսոն չլհատեցաւ երբեք. ուրիշ տեղ գնաց հաստատեց ուրիշ լրագիր մը: Հոն մահն աչք առնելով կայարանապետին տղան ազատեց և սա երախտագիտութեամբ թող տուաւ որ երկաթուղւոյ հեռագրական գործիները ուսումնասիրէ:

Էտիսոն իր ճշմարիտ ճամբան գտած էր. երկու ամսուան մէջ եղաւ յաջողակ հեռագրիչ մը, և իր գործածած հեռագրական գործիներուն այնպիսի կատարելութիւններ տուաւ՝ որոնցմով իր վրայ դարձաւ գիտուններուն ուշադրութիւնը: Եւ գիտէ՞ք ի՞նչ էր այն ատեն իր տարիքը: Հազիւ տասներեք տարու էր.

և արդէն փոքրիկն էտիսըն շատ ժողովրդական եղած էր . զանի կը կոչէին «Պզֆկ Յրանֆիլն» : Այն վայրկենէն նա անխոնջ կերպով ուսումնասիրեց ելեքտրականութեան գործիները և անոնցմէ անակնկալ և հանձարեղ գիւտեր ըրաւ : Կատարելագործեց հեռաձայնն՝ որու միջոցաւ քաղաքէ քաղաք կարելի է խօսիլ : Հնարեց ձայնագիր գործին , որ հաւատարմութեամբ կ'արձանագրէ մարդու ձայնին հնչումները և կը հնչեցնէ որչափ որ ուզուի : Հնարեց նոյնպէս ելեքտրական լսողատերը :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Տղայքներ, աշխատեցէք որ օգուտ բաղէք ձեր ժամանակէն , թէև ամէն մարդ կարելի չէ որ մէկ մէկ էտիսըն ըլլայ . բայց ճշմարիտ է որ կամը կը յաղթէ շատ դժուարութեանց :

45. — Կ Ո Վ Ը



**ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ.** — Այն որ կը խօսի հոտ, հարուստ մարդ մը եղած է , բայց գորովանօք և երախտագիտութեամբ կը յիշէ թէ ինք երբեմն որր և աղբատ ըլլալով ընդունուեցաւ աղբատ գեղջկուհիի, Մայր Պարպլըէնի բով . — Նա իր յիշուողութեան մէջ նորէն կը տեսնէ այն բարի կովն՝ որ այն խոնարհ յարկին ուրախութիւնն և հարստութիւնն էր :

Բնագէտին համար՝ կովը պարզապէս որոճացող կենդանի մ'է , ուղեւորին համար՝ դաշտերու մէջ հաճելի

երեւոյթ մ'ունի , երբ իր ցօղերէ տամկացած սև ցուկը խոտերուն մէջէն վեր կը տնկէ : Գաղաքացի տղուն համար՝ կաթնախառն սուրճի և սերի աղբիւր մ'է , բայց գիւղացուն համար շատ աւելի թանկագին բան մ'է : Ո՛րչափ աղքատ ըլլայ գիւղացի մը , և ո՛րչափ բաղմամարդ ըլլայ իր ընտանիք , ապահով է որ անօթութենէ չնեղուիր քանի որ կով մ'ունի իր ախոռին մէջ : Եղջիւրներուն փօկ մը կամ պարզ չուան մը կապելով, տղայ մը կրնայ կովը պտըտցնել խոտաւէտ ճամբաներու վրայ , որք ոչ մէկու սեփականութիւն են , և իրիկունը բովանդակ ընտանիքը կարագ ունի իր թանին մէջ , և իր գետնախնձորը թրջելու կաթ : Հայրը , մայրը , աղաքը , մեծ ու փոքր , ամէնն ալ կովէն կ'ապրին :

Մենք ալ ա՛յնչափ լաւ կ'ապրէինք մեր կովէն , Մայր Պարպլըէն և ես , որ մինչև այն ժամանակ գրեթէ երբէք միտ կերած չէինք : Բայց ոչ միայն մեր սնուցիչն էր , այլ և ընկերը , բարեկամը , վասն զի պէտք չէ երեւակայել թէ կովն ապուշ կենդանի մ'է . ընդհակառակն շատ ուշիմ է . այնպիսի բարոյական ձիրքեր ունի , որոնք կրթութեամբ աւելի կը զարգանան : Մենք կը գգուէինք մեր կովը , կը խօսէինք իրեն , կը հասկընար , և իր կողմէ ալ իր կ'ըր և քաղցր նայուածքով քաջ գիտէր հասկըցնել մեզ ինչ որ կ'ուզէր , ինչ որ կ'զգար : Վերջապէս կը սիրէինք զայն , նա ալ մեզ կը սիրէր :

Էգտը-Մայր (Ընտանեկան)

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Գիտէք թէ ինչու այս կովը այսքան աղէկ էր , որովհետև մարդիկ անոր հետ աղէկ կը վարուէին : Անասուններն մարդոց պէս կ'զգան չարն ու բարին :



### 46. — ԿՏԱԿ ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ



տղայքն հասկըցան թէ քնշու համար իրենց հայրը խօսած էր «Գանձին» նկատմամբ:

ԲՈՎԱՆԳԻՍՎՈՒԹԻՒՆ . — Մահա-

մերձ երկրագործ մը իր որդիներուն կը պատմէ թէ ստակի մեծ գումար մը թաղուած է իրենց արտին մէջ : Եւ սակայն ճշմարիտ չէր այս . բայց տղայքը գանձը գտնելու համար դաշտ դարձան և անկէ հանեցին, ոչ թէ դրամ, այլ լաւ հունձք՝ որ շատ ստակ կ'արժէր : Այն ատեն

Անխոնջ վաստակ, կեանք ըզգաստ,  
Են դրամագլուխ միշտ պատրաստ :  
Երկրագործի մը կենաց վերջ մօտենալով,  
Իր զաւակները ձայնեց գալ անկողնին քով,  
« Որդիք, ըսաւ, ա՛հա կենացքս վերջն հասաւ,  
« Պէտք է շուտով վառուած ճրագըս անցնի բնաւ,  
« Իբրեւ կրտակ ըսեմ ձեզի խօսք միայն,  
« Թէ հասկըցաք այն ձեզ կ'ըլլայ բաւական : —  
« Մեր արտին մէջը կայ մեծ գանձ մը թաղուած .  
« Ձեր պապերէն չէ՛ այլ նախնիքէն մընացած .  
« Ուստի, տըղաք, քըրտինքնիդ մի՛ խընայէ՛ք,  
« Սուր արօրնիդ ամէն ծակ ծուկ քալցուցէք .  
« Օր մը չէ որ մ'այդ գանձին դուք տէր կ'ըլլաք . . . » :  
Խօսքը կըտրեց այն իմաստուն ծերունին,  
Փակեց աչքերն և աւանդեց իր հոգին :  
Թողունք մեռելն՝ ու զաւակացը դառնանք .

Ատոնք իրենց հօր կրտակին հըպատակ,  
Փորկըրեցին ամեն անկիւն, ամեն ծակ .

Արտին բոլոր հող գետին  
Տակն ու վըրայ խառնեցին .  
Բայց չէ թէ գանձ պահըստական,  
Խանգրած գանկիկ մ'ալ չը գտան :  
Յետոյ, ըսին . « Ի՛նչ որ լինի,  
« Փորած տեղերըս ցան ցանենք,  
« Եթէ բունի՛ հազար բարի,  
« Թէ չը բունի՛ ողջ ըլլանք մենք : » —  
Բայց ի՛նչ չըբունի . ցորենն երեսուն,  
Վարսակն ու հաճար՝ մէկին տեղ յիսուն .  
Թէ կորեկն ըսես մէկն եօթանասուն՝  
Ժողովեցին որդիք խելօք գեղացւոյն :  
Շատ բան ծախեցին, մեծ վաստակ ըրին,  
Հօրերնուն հողոյն ողորմիս հանին :

Հ. Բ. ԲԱՆՈՍԵՐԵԱՆ

ՈՐՈՏՈՍՎԱՆ . — Կրնայ ըլլալ որ դուք չունենաք ստացուածք, հող, տուն, դրամ, Բայց տեսէք թէ քնշպէս շատ հարուստներ աղքատ կ'ըլլան : Բայց կայ հարստութիւն մը, զոր ոչ մէկ բան կրնայ ձենէ խել, ոչ հրդեհը, ոչ ողորումը, ոչ գողեր. և այդ հարստութիւնը աշխատութիւնն է : Ուսում սովորեցէք դպրոցին մէջ. աւելի վերը, արհեստ մը սորվեցէք, յարատե աշխատող մը եղէք, և ահա հարուստ պիտի ըլլաք և կամ գոնէ դիւրակեցիկ — եւ աշխարհ ձեզ պիտի յարդէ :

ԱՌԱՄ . — Չանձոյրն ծուշուրեալ մտնով աշխարհ մտաւ :

### 47. — ԳԵՂՁՆ ԵՒ ՈՒՌԵՆՆԻՆ

**ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ.** — Հետեւեալին մէջ պիտի տեսնէք թէ ինչպէս գեղձն իրեն նեցուկ ունեցաւ ուռենին և այս վերջինն ալ զարգարուեցաւ գեղձին ծաղիկներով:

Գեղձի մը հունան բուսած էր թանձր ցանկապատի մը տակ: Խեղճ փոքրիկ տունկը օդէ և լուսէ զուրկ ըլլալով գեանին վրայ կը սողար և իր քով նեցուկ մը կը փնտռէր: «Ափսո՛ս, կ'ըսէր նա, եթէ կարենայի քիչ մը բարձրանալ այս ցանկապատէն՝ որ զիս կը խեղդէ, պիտի տեսնէի արև և պիտի կրնայի ծաղկիլ: — Սպիտակ և բարձր ճիւղերով ուռենի՛, կուզե՞ս որ քեզի կռթընիմ»:

Ուռենին ծուկ գէպ ի երկիր իր կակուղ ճիւղերէն մին: Գեղձը անոր կառչեցաւ, իր փոքրիկ տկար ցօղունն անոր փատթեց: Յետոյ այն ճիւղն ելաւ մեծ ճիւղերուն՝ որպէս զի անոնց հետ հիւսէ իր սրտիկներ: Եւ ամբողջ ամառն տեսանք ուռենին՝ զարգարուած կապուտակ բոժոժիկներով, որոնք շնորհալի կերպով կախուած էին անոր ճիւղերէն: Հետուէն կ'ըսուէր թէ այն ծաղիկներն իրեններն էին:

Մին իր նեցուկը տուաւ և միւսն՝ իր գեղեցկութիւնն:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Ամէնքս ալ իրարու օգնութեան կարօտ ենք. չըլլանք ետսէր. ետսիրութիւնը չարիք մ'է:

### 48. — ԳԵՂԱՑԻ ԵՒ ՕՁ

**ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ.** — Գեղացի մը օձի մը կեանքը կ'ազատէ. բայց այն կենդանին իր բարերարը սպաննելու փորձ կը փորձէ: Իսկոյն իր ապերախտութեան արդար պատիժը կ'առնու:



Գեղացի մը ճըմեռ ատեն՝  
Տուն դառնալով իրիկուան դէմ  
Իրեն գեղին մօտ անտառէն,  
Ճամբուն վրայ տեսաւ յանկարծ  
Երկայն երկայն օձ մը պառկած:  
«Սառած է խեղճն, — ըսաւ մըտքէն, —  
«Տանիմ մեր տուն, ինչ կ'ըլլայ,  
«Գուցէ նորէն ողջըննայ» —  
Ժանդ վիրագին ողորմեցաւ,  
Պոչէն բռնած առաւ տարաւ,  
Եւ կրակին քով ըզգոյշ դըրաւ:  
Եւ ինքն յոգնած դադրած այն տեղ  
Քիչ մը ըսաւ հանգչիմ այս տեղ:  
Անցաւ վրան քիչ ժամանակ,  
Օձն անիրաւ տաքնալուն պէս՝  
Վերցուց գլուխը նայեցաւ,  
Ու ֆըշալով օղակ օղակ,  
Դէպ գեղացին բարերար

Սողոսկեցաւ թըշնամաբար :  
 Մարդն արթընցաւ, ինչ տեսնայ . —  
 Իր մահուանէ փրկիած գաղանն  
 Պիտի մատնէ զինքը մահուան՝  
 Եթէ քըչիկ մ'ալ ուշանայ :  
 Աճապարեց առաւ կային  
 Զախեց գըլուխ չար գաղանին :

Հ. Գ. Քաւօնքեան

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Տղան, ինչ դաս կրնաս քաղել այս առակէն, —  
 Անշուշտ դուն երբեք ասկերախտ մը չպիտի ըլլաս . այդ՝ շատ չար տգեղ  
 մոլորութիւն մ'է, և դուն գիտես թէ ասկերախտները միշտ չար կ'ըլլան :  
 — Հոս ուրիշ դաս մ'ալ կայ . յախտուն կերպով բարիք մի՛ ընէր . և որով-  
 հետեւ չես կրնար ամէն մարդու առհասարակ օգնել, ընտրէ այն մարդիկն՝  
 որոնք արժանի ըլլան քու ընելիք բարիքներդ ընդունելու :

**ԱՌԱՄ.** — Բերանը ծռու, աչիւր ծռու, ետեւէն սես, ճամբայ տու :

### 43. — Ս ՈՂԻ Լ Ի Զ Ը



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.** — Ֆրանք-  
 լին, Ամերիկայի Միացեալ-Նահանգաց  
 զլխաւոր հիմնադիրներէն մին, շատ խե-  
 լացի մարդ մ'էր . Հիմա կը տեսնէք թէ  
 տղայութեան ատեն ինչ անմտութիւն  
 ըրաւ : Բայց ասպագային գիտցաւ օգուտ  
 քաղել անկէ՝ մէյ մ'ալ չգործելու պայ-  
 մանաւ :

Երբ ես հինգ կամ վեց տարեկան տղայ մ'էի, տօնի  
 օր մը, գրպանս զբամ ունէի : Անմիջապէս խաղալիկներ

ծախող խանութ մը գացի . բայց շատ հրապուրուեցայ  
 սուլիչի մը ձայնէն, զոր ճամբուն վրայ ուրիշ պղտիկ  
 տղայ մը ձեռքը բռնած կը փչէր, և գրպանիս բոլոր  
 ստակը տալով անոր՝ սուլիչը ծախու առի :

Եւ ահա գոհ սրտով տուն եկայ և կը փչէի, ձանձ-  
 րացնելով ամբողջ տնեցիները . եղբայրներս և քոյրերս  
 երբ իմացան թէ այս դէշ խաղալիկին համար բոլոր ու-  
 նեցածս տուած էի, ըսին ինձ թէ արժէքէն տասն ան-  
 գամ աւելի տուած եմ : Այն ատեն մտածեցի թէ ինչե՛ր  
 կրնայի գնել եթէ ստակս քովս ըլլար, եթէ աւելի խո-  
 հեմ եղած ըլլայի . ծաղրուեցայ, որուն համար լացի, և  
 խորհրդածութիւնն ինձ աւելի վիշտ պատճառեց, քան  
 թէ այն սուլիչն՝ հաճոյք :

Այս դէպքն սակայն յետոյ ունեցաւ ինձ համար իր  
 օգուտն, որովհետեւ անոր տպաւորութիւնն իմ հոգւոյս  
 մէջ մնաց . ուստի երբ կ'ուզէի ինձ կարեւոր եղած բան  
 մը գնել, կ'ըսէի ինքնիրենս . «Սուլիչին չափէն աւելի  
 ստակ չի տանք» : — Եւ ստակս կը խնայէի :

Ֆրանկլին

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Ես կը ծանչնամ շատ տղաքներ՝ որ այս պզտիկ  
 Ֆրանքլինին նման, գրպանին քիչ մը ստակ ունենալուն պէս անմտու-  
 թեամբ կ'երթան տալ գայն այն առաջին առարկային համար՝ որ իրենց հա-  
 ժոյ կ'երեւի : Սուլիչ մ'է այն և կամ ուրիշ խաղալիկ մը, որ այնչափ ստակ  
 չարժեք, և անոնք անմիջապէս կը ցաւին որ այնչափ սուղ գնեցին : Յիշե-  
 ցէք Ֆրանքլինի պատմութիւնը և անոր նման երբ դուք ալ բանի մը փա-  
 փար ունենաք, ըսէք անմիջապէս Սուլիչին չափէն աւելի ստակ չի ստնի :



### 50. — ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

Բաւական չէ միայն աշխատող ըլլալ, այլ պէտք է պարկեշտ ըլլալ. մանիշակի նման Թարչոյ բնաւորութիւն ունենալ:

Երբ դիցունք ձեզ կանց՝ Փլորան,  
Մանուշակին նոր կեանք տըւաւ,  
Խառնեց անոր գոյներ այնքան,  
Սիրուն, չքնաղ գոյներ անբաւ:  
Տըւաւ մարմին թիթեռնիկի,  
Նաեւ անմահ բուրում ծաղկի,  
Կ'ըսէ. «Ա՛լ ի՞նչ տամ քեզ, որդի՛ս,  
«Ահա գեղով, չնորհօք փայլիս»:  
— «Տուր ինձ միայն, կ'ըսէ ծաղիկն ամօթղած,  
«Քիչիկ մը խոս՝ որ մնամ այս տեղ ծածկուած»:

ՌԱՐԿԵՇՏՈՒՆ. — Կաւ յատկութիւն մ'է պարկեշտ ըլլալ, արժանիք մ'է այն. եթէ ունենաս ընտիր կարողութիւններ, որչափ որ ալ ծածկուիս, զքեզ պիտի փնտռեն:

### 51. — ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉՆԵՐ

ՌՈՂԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ. — Ստեփան և Մինաս՝ որոնք աղքատ գործաւորի մը տղաքներն էին, երկուքն ալ եղած էին մեծ, նշանաւոր և հարուստ նկարիչներ: Բայց անոնց սրտերն իրարու չէին նմաներ գրեթէ: — Ահաւասիկ թէ ինչ ճարտար միջոցաւ Մինաս՝ որ պարզ և բարի մնացած էր, յիշեցուց իր եղբորն՝ որ հպարտ և ունայնամիտ եղած էր, թէ պէտք էին սիրել երկուքն ալ աղքատները և խոնարհները:



Ստեփան և Մինաս հասարակ դերձակի մը տղաքներն, երկու նշանաւոր նկարիչներ էին: Հիմայ անոնք իրենց տղայութեան աղքատ վիճակէն շատ հեռու էին: Որովհետեւ իրենց տաղանդներուն չնորհիւ փառք և հարատուութիւն չանած էին:

Անոնցմէ մին Ստեփան, մտունալով իր խոնարհ ծագումն՝ ամբարտաւան կեանք մը կը վարէր, աշնուական և հարուստ մարդերով շրջապատուած: Բայց Մինաս ամենուն նկատմամբ անձնուէր էր թէ՛ ամենէն աղքատներուն և թէ՛ ամենէն հարուստներուն: Օր մը անոր եղբայրն յանդիմանեց անոր այս ընթացքը: Այն ունայնամիտը խօսելու պահուն այնքան բորբոքեցաւ որ չտեսաւ թէ Մինաս թերթ մը թուղթ առած էր, և իբր թէ անոր ուշադրութեամբ մտիկ ընել ձեւացնելով, կը գծէր: «Ի՛նչ կ'ընես հոն», ըսաւ անոր վերջապէս:

— Եղբայր իմ, պատասխանեց Մինաս, այս թղթին

վրայ կը գծեմ անոր պատկերն՝ որ պէտք է որ միշտ  
մնայ մեր երկուքին սրտերուն մէջ, և մեզ սիրելի ընէ  
ամէն մարդիկն, ինչ վիճակի մէջ որ ալ ըլլան անոնք:

Եւ Մինաս ցցուց իր եղբօրը գործասելանին վրայ  
ծալապատիկ նստած, ասելը ձեռքը դերձակի մը պատ-  
կերն: Նա անոնց հայրն էր:

**ԲԱՐՈՏԱԿԱՆ.** — Ո՛վ տղայ, Քերես քու ընտանիք խնայր՝ դասէն  
է և կամ աղքատ է: Եթէ դուն ապագային հարուստ ըլլաս, քնչ պիտի  
ընես: Նախ և առաջ պիտի սիրես բարի ծնողդ և անոնց որդին ըլլալուդ  
ձամար հպարտութիւն պիտի զգաս. որովհետեւ անոնք բեզի համար անձ-  
նուէր եղան: Եւ եթէ մեռած ըլլան ծնողդ, սիրէ զանոնք՝ որոնք հօրդ  
պէս աղքատ են, ինքնիրենդ ըսելով. «Նա ալ երբեմն այսպէս էր, երբ ևս  
պգտիկ էի»:

**ԱՌԱՎ.** — Բարը գոնար չի շինիր, ոսկի սնունդ պահելով, ագ-  
ռաւն քուրակ չի շինիր գողունի փեսուրներով:

## 52. — Գ Ք Ո Ւ Յ Ի Ի Ն



**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.** — Երկու  
տղայր, քոյր և եղբայր, անցան կոյր ծե-  
րունւոյ առջև. անոր շան վզէն կախուած  
էր մուրացկանի գլխարկ մը: Երկու  
տղայրն իրենց գրպանին մէջ կարկանդակ  
գնելու ստակ ունէին. բայց գժացին կու-  
րին և կարկանդակ գնելու տեղ, բարի  
սրտով իրենց դրամիկները գլխարկը  
դրին. յետոյ շատ գոհութեամբ հեռացան:  
Մտիկ ըրէք նախ թէ քնչ կ'ըսեն իրա-

բու՝ կուրին առջեւէն անցնելով. պգտիկ քոյրը կը սկսի:

« Ահա տիրոջն հաւատարիմ,  
« Կարծես անոր սոսկ մըտերիմ,  
« Ի՞նչ կ'ընէ այս խեղճուկ շընիկ,  
« Ինչե՛ր ունի մեզ ըսելիք.  
« Կ'երկընցընէ մեզ մի գըլխարկ,  
« Ի՞նչ է արդեօք այս նոր հընարք »:

— « Բոյր իմ, կ'ըսէ նա կարծես.  
« Կոյր ծեր մ'է տէքս, ահա տե՛ս:  
« Խեղճ ու աղքատ մուրացիկ,  
« Գլխացէ՛ք անոր, ո՛վ մանկտիք:  
« Որպէս զի՛ շատ գընէ հաց,  
« Ուտէ, չմնայ նա քաղցած:  
« Տխու՛ր պատմութիւն, թշուա՛ւ մարդ,  
« Ա՛հ, կը ցաւիմ քու վըրադ:  
— « Օ՛ն այս անգամ, իմ քուրիկ,  
« Եկու՛ր, ըրէ՛ ինձ մըտիկ.  
« Մեզի չառնենք կարկանդակ,  
« Ձըգենք գըլխարկն մեր ըստակ »:  
— « Ո՛հ, եղբայրիկ, տանք բոլոր  
« Մեր մուրացիկն ալեւոր:  
« Թող նա կուշտ կուշտ ուտէ հաց,  
« Եւ լոյս իջնէ իր աչաց »:  
— « Տըղայք, կ'ըսէ ծերուկն, եմ ձեզ չնորհակալ,  
« Ըլլաք միշտ օրհնեալ »:

Հեռացան քոյր և եղբայր  
Գոհ և զըւարթ մինչ իսպառ.  
Թէ ուտէին ամէն տեսակ  
Շաքար, պտուղ կամ կարկանդակ,  
Չպիտի ըլլար իրենց համար,

Այնպէս համեզ զըւարթարար :  
Իրենք զիրենք զըրկեցին ,  
Եւ գըթութիւն գործեցին :

**ԲԱՐՈՑԱԿԱՆ.** — Այս տղաք երջանիկ են , որովհետև բարի գործ մը ըրին . բայց ինչ բանի մէջ կը կայանայ այս բարի գործը . լաւ ըմբռնեցէք այս կէտն . որովհետև իրենք զիրենք զըրկեցին ու է բանէ մը : — Եթէ դուք տաք այն բանն , որ ձեզի օգուտ մը չունի , ինչ կ'ըլլայ աղիկ : Բայց եթէ դուք զըրկուիք հաճոյքէ մը , որպէս զի ուրիշի մը հաճոյք պատճառէք , ահա այն ատեն զթուծիւն կը գործէք :

**ԱՌԱՄ.** — Երկ դուք շատ ունիք , շատ տուք . երկ ինչ ունիք , ինչ տուք , բայց քարի պոսով տուք :

53. — ՏԳԵՂ ԱՂԶԿԱՆ ՄԸ  
ԳԵՂԵՑԻԿ ԽՈՐՀՐԴԱԾՈՒՅԻՒՆՆԵՐԸ



**ՐՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.** — Ենչ տղեզ էր , և իր տղեզուծիւնը ճանչնալու մասին բաւական խելք ունէր . բայց նա բարի սիրտ մ'ունէր , և այս գեղեցիկ ըլլալէ աւելի կ'արժէ :

Բաւական անմիտ մէկը չեմ , որպէս զի ինքզինքս գեղեցիկ կարծեմ , մինչդեռ գիտեմ թէ այնչափ տղեզ եմ որ ոչ մէկն ինձ կրնայ նայիլ : Ինձ շատ անգամներ ըսին ,

անոր համար շատ լաւ գիտեմ այդ բանը . . . Բայց ես անոնց նման չեմ որ կ'ըսեն . « Ահաւասիկ թրթուր մը , դժուծ միջատ մը , ա՛հ , ս'ըչափ տղեզ է . պէտք է զայն մեռցնել » : Ես չեմ ճգմեր բարի Աստուծոյ խեղճ արարածը . և եթէ թրթուրը ջրին մէջ իյնայ , անոր յարդ մը կը նետեմ , որպէս զի ազատի : Եւ այս պատճառաւ կ'ըսուի թէ կը սիրեմ գէշ կենդանիները . . . որովհետև չեմ սիրեր նեղացնել գորտ մը , պիծակի մը ոտքերը փրցնել , և ողջ չ'ըջիկ մը դամել ծառի մը վրայ : Կ'ըսեմ անոր . « Խեղճ անասնիկ , եթէ հարկ ըլլար սպաննել ամէն տղեզ արարած , քեանէ աւելի ես պէտք է որ ապրելու իրաւունք չունենայի » :

**ԲԱՐՈՑԱԿԱՆ.** — Դիտէք ինչ պիտի ըլլայ այս բարեհամբոյր աղջկան . որովհետև համեստ է , մարդիկ չ'պիտի ծաղրեն զանի . երբ մարդ համեստ է և պարզ , նա ծաղրելի չէ : Եւ յետոյ , որովհետև բարի է , մարդիկ պիտի սիրեն զանի : Մարդ երբեք տղեզ չէ զինք սիրողներուն առջև :

**ԱՌԱՄ.** — Ինչ որ բոցիս գուշոյ , ան կուգայ բուշոյ :



### 54. — Մ Ե Ծ Մ Օ Ր Ս Ի Լ Ի Կ Ը



ՅԱՐԱԳՎԱԿՈՒԹՅՈՒՆ . — Երեկոյ էր , արեւուն մարը մոտելու ատենն է : Մարդ մը , որ արդէն ձերացած էր՝ կը խորհէր երբեմնի ժամանակին վրայ , երբ ինք փոքրիկ տղայ մը եղած ատեն կ'ապրէր իր մեծ հօրը բով , որ շաղացական էր , և որ կը պատմէր իրեն տիրուն պատմութիւններ , երբ իր մեծ մայրը բանկը մանէր :

Ի՛նչպէս կանցնէր արագ արագ  
Մեծ հօրս ջաղացքն մեր ժամանակ .  
Հաւաքուէինք երեկոյին  
Մեր մեծ մօրը շուրջ աթոռին :  
Ի՛նչպէս մեծ հօրս վէպերն այնքան  
Կը լրսէինք լուռ և անձայն ,  
Երբ մեծ մօրըս մաշած իլիկ ,  
Կ'երթար կուգար շատ երջանիկ :

Ո՛հ , մեր պապիկն ի՛նչ բարի ծեր ,  
Հարիւր տարուան նա կեանք ունէր .  
Անոր խրճիթն հին՝ ամէն բան ,  
Եւ նոր՝ որդւոց որդիք միայն .  
Հին էր գինին , ինչպէս մաւան ,  
Մըտերմութիւն հաճոյական .  
Հին պատմութիւն , երգերն ալ հին :

Զուարթութիւն էր մեր հանին ,

Միշտ ծիծաղկոտ՝ այն բարի կին .  
Ժըպտուն՝ ծընած օրէն ի վեր՝  
Արթըննալուն նա կ'երեւէր .  
Ինք հոգին էր երջանիկ տան .  
Իրմով զըւարթ՝ իր ապաստան .  
Ի՛նչու իլիկն կը մընայ լուռ ,  
Այն տեղ ամէն մարդ է տըխուր :

Եւ պապիկիս ջաղացքն ալ հին  
Ա՛հ , լըքուած է բոլորովին ,  
Մեծ մօրս մաշած իլիկն արդէն  
Ահա կախուած կայ հոն պատէն .  
Եւ դուք ծածկուած խոտերուն տակ  
Հոն անբաժան միշտ կը մընաք .  
Բայց ես կարծեմ տեսնել զձեզ ,  
Ուստի լալով կ'ըսեմ այսպէս .

Ի՛նչպէս կ'անցնէր արագ արագ  
Մեծ հօրս ջաղացքն մեր ժամանակ .  
Հաւաքուէինք երեկոյին  
Մեր մեծ մօրը շուրջ աթոռին :  
Ի՛նչպէս մեծ հօրս վէպերն այնքան  
Կը լսէինք լուռ և անձայն ,  
Երբ մեծ մօրս մաշած իլիկ  
Կ'երթար կուգար շատ երջանիկ :

ՅԱՐԱԳՎԱԿՈՒՆ . — Ո՛վ մանուկ , սիրէ ծնողքդ , երբ անոնք կենդանի են . սիրէ զանոնք և մտածէ անոնց վրայ , երբ անոնք մեռած են :

55. — Կ Օ Շ Ի Կ Ն Ե Ր Ը

ԲՈՎԱՆՊԱՍՏՈՒԹԻՒՆ . — Ինչ վիճակի մէջ ալ ըլլար , միշտ բարի  
մնանք այս Զաւէնին պէս :

Զաւէն փոքրիկ այծարած մ'էր : Շատ քիչ բան կը  
չանէր , այնպէս որ նոյն իսկ չէր կրնար զոյգ մը կօշիկ  
գնել : Այսպէս սոսկալի կերպով կը նեղուէր . որովհե-  
տեւ արդէն անձրեւներ կը տեղային և շատ ցուրտ էր :

Օր մը տեսաւ որ դժոխագէմ մարդ մը կ'եղնէ ան-  
տառէն . անմիջապէս ճանչցաւ զանի , որ երկրին ամենէն  
սոսկալի գոյն էր :

« Իմ արհեստս քուկինէդ աւելի չանաւոր է , ըսաւ  
անոր այն մարդը : Եթէ իմ քովս մտնես , քեզի աղէկ  
վիճակ մը կը խոստանամ , և այսօրուրնէ անգամ քեզի  
զոյգ մը նոր կօշիկներ կը նուիրեմ » :

Բայց Զաւէն պատասխանեց . « Աւելի կը սիրեմ ոտ-  
քերս ցեխերու մէջ թաթխել քան թէ հոգիս ոճիրներով  
աղտոտել » :

ԲԱՐՈՑԱԿԱՆ . — Ով որ խղճի խայժ չունենար , այնպիսին Թէ հա-  
րուտ է և Թէ երջանիկ :

ԱՌԱՄ . — Դեղ կ'ընես , ֆեղ կ'ընես , աղեկ կ'ընես , ֆեղ կ'ընես :

56. — Ե Ր Գ Գ Ե Ղ Ջ Կ Ա Ա Կ Ա Ն



ԲՈՎԱՆՊԱՍՏՈՒԹԻՒՆ . — Դիւղացին կ'երգէ իր երջանկութիւններն :

Լուսնակն անուշ , հովն անուշ ,  
Շինականի քունն անուշ ,  
Ծագեց լուսնակ երկընքէն ,  
Հովուին սրբինգն էր անուշ :

Հօտաղն եզներ կ'արածէ ,  
Մաճկալ պառկեր քունն անուշ ,  
Քաղցըր զեփիւռ կը շընէ .  
Ծովային հովն էր անուշ :

Դաշտեր , ձորեր նընջեր են ,  
Ջրեր գլգլան , ձայն անուշ ,  
Թռչունք թռան իրենց բոյն ,  
Պիւլպիւլին ձայնն էր անուշ :



Անճահական հոտ բուրբեր ,  
 Կարմիր վարդի հոտն անուշ ,  
 Հասուն պտղովք լի ծառեր ,  
 Որոց տակ քուհն էր անուշ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Գիւղացին հարուստ է , նա ունի իր ձեռքին մէջ բնութեան անոնն գանձերն . միայն թէ պէտր է բարի ըլլայ և աշխատասէր :

**ԱՌԱՎ .** — Գարի հաց՝ բրու բան , պսպս ուտե՛ք՝ երբայ գուրան :

57. — ԿԱՐՈՆ ԿԱՄ ՊԱՏԺՈՒԱԾ ՍՏԱԽՕՍԸ



**ՅՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ .** — Կարօ հովին զուարճարանել կը սիրէր . նա կ'ըրօնուր ոչնչի համար մարդոց գործերուն արգելք ըլլալով . կը պոռար ճշուտ եկէք , գայլ կայ) : Ամենքը կուզային : Կարօն կ'ըսէր . Ոչ , գայլ չիկայ : Մարդիկ կը խարուէին և Կարօն կը խնդար . Հիմա պիտի տեսնէր՞ է քնչպատահեցաւ Կարօի :

« Գայլ կայ » , Կարօն կը պոռար ,  
 Եւ կը խուովի դաշտավայր .  
 Բոլոր դրացի հովիւներ  
 Կը վազէին անհամբեր ,  
 Կարօն զանոնք կը ծաղրէր :  
 Եւ ամօթով դառնային  
 Բարկանալով Կարօյին :  
 — Գայլ մ'անօթի , երկու օր վերջ

Վահ , կը մըտնէ ոչխարաց մէջ :  
 « Գայլ կայ , դայլ կայ » , Կարօն կ'ըսէր ,  
 Եւ զիւղացիք են անտարբեր :  
 Նա աւելի պոռար , ինչ հող ,  
 Հոն օգնութեան կուգայ ոչ ոք :  
 Կը բըզըքօէ գայն անըզգամ  
 Մեր սըտախօս մինչեւ անգամ ,  
 Սըսխօսին կրի տունն ալ ,  
 Անոր խօսքին մեկը չաւսար :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Ստեղն գծուծ բան մ'է , պարկեշտ տղու մը անարժան և նոյն իսկ վտանգաւոր բան մ'է : Եթէ դուն ստախօսի համբաւ ունենաս և ըսես թէ . « կ'ապահովցնեմ գձեզ թէ այս անգամ չեմ ստեր » , պիտի խնդան բու վրայ և ծաղրելի պիտի ըլլաս :

**ԱՌԱՎ .** — Նախանձոքը հաւցիտ տունի , ստախօսը չափ տունի :

58. — Ա Գ Ռ Ա Ի Ը

**ՅՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ .** — Չպիտի հաւատայիր թէ ագուաը իր ծանր կերպարանքով և իր սեւ հանդերձով շատ չարամիտ և շատ խաբեբայ մէկը եղած ըլլայ : Սակայն անհաւաստիկ ագուա մը՝ որ զրեթէ չի՛նճանիր անոր՝ որ թող կուտար Պարօն Աղուէսին իր պանիրն ուտել :



Ագուաը շատ սրամիտ և որսորդ կենդանիներուն

ամենէն սրամիտն է : Այս զուարճարան կենդանին , ծաղ-  
րարանութեան մէջ , այն առաւելութիւնն ունի , զոր իր  
զգեստին տիրութիւնը , ծանրութիւնը և տեսքը կու-  
տան իրեն : Անոնցմէ մին ամէն օր կը տեսնէի , Նանգի  
փողոցներուն մէջ , նեղ անցքի մը դրան վրայ՝ որ , իբ-  
րեւ կէս դերի , միայն կը մխիթարուէր շուներուն՝ իր  
կրծուած թեւով չարութիւն ընելուն վրայ : Նա թող կու-  
տար որ անցնէին չնիկներն : Բայց , երբոր իր շարամիտ  
աչքը գեղեցիկ հասակով շուն մը կը նշմարէր , վերջա-  
պէս արժանի իր քաջասրտութեան , ետեւի կողմէն կը  
ցատկուտէր , և ճարպիկ և աննշմարելի շարժումով մը  
կ'իյնար անոր վրայ . իր զօրաւոր սեւ կաուցովը երկու  
խայթուածներ կուտար անոր : Շունը պուռալով կը փախ-  
չէր : Ագռաւը , գոհ , հանգարտասիրտ և ծանրագլուխ ,  
իր տեղը կը տեղաւորուէր և երբէք չէր կարծուեր թէ  
այս տիրադէմ ագռաւը այնպիսի դրօսանք մ'ըրած ըլլար :

**ՈՍՐՈՑՍԿԱՆ .** — Դիտնձ էք թէ շատ լուրջ մարդիկներ , ինչպէս ու-  
սուցիչներ , բժիշկներ արտաքին լրջութիւն մը ունին , որ քիչ մը կը վախ-  
ցընէ տղաքները : Մինչդեռ ներքնապէս անոնք շատ սիրելի և շատ զուարթ  
են , և իրենց զուարթութիւնն աւելի հաճոյսովը կ'ըլլայ , երբ իրենց լրջու-  
թեան հակապատկերն ըլլայ : Այսպէս ժպիտ մը աւելի հրապուրիչ է սովոր-  
աբար լուրջ դէմքի մը վրայ :

**ԱՌԱՅ .** — Ծանր կեցիք որ շիտ գաս :

### 59. — ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻԻՆ

Յատքրտան ու շատղբուց ճըպուօր  
Ճըռճըռալով անցուց բոլոր ամառը ,  
Ա'յնպէս որ ի'նքն ալ գրեթէ չիմացաւ ,  
Թէ ճըմեռը յանկարծ ինչպէս վերայ հասաւ .  
Դեղնեցան ու թօշնեցան դալարադեղ դաշտերը ,  
Ո'ւր մնացին ամառուան տաք ու պայծառ օրերը ,  
Երբ ամէն մէկ տերեւի ներքեւիկ  
Պատրաստ էր մեր ճըպուօրին հացն ու բարձիկ .  
Վաղուց անցան գընացին այն բաները ,  
Յուրաք կոխեց , սովը երեւցուց ձանկերը ,  
Լըռին կեցաւ ճըպուօրը ձայն չէր հաներ .  
Քաղցած փորով ո'վ կ'երգէ որ նա երգեր .  
Խեղճը նեղն ինկած , հոգին բերանը ,  
Սողալով գընաց մըրջիւնին տունը .  
«Սա'նամար , ըսաւ , սիրուն դըրացիս ,  
Ձեռքէ մի' թողուր զիս նեղ ատենիս ,  
Ճար մը ճարակ մը , քաղցած կը մեռնիմ' ,  
Մինչեւ որ գարնան օրերուն հասնիմ' ,  
Քըչըճիկ ապրուստ տաքուկ տեղ մը տուր : »  
— «Կընքամար քուրիկ , կ'արմըննամ ատոր ,  
Ըսաւ մըրջիւնիկն , ի'նչ է պատճառը ,  
Ինչ ըրիր հապա բոլոր ամառը » :  
— «Ա'խ , հոգիս , ըսաւ , ատե'ն ունէի ,  
Ես բոլոր օրը խաղ կանչելու հետ էի .  
Պարտեղները , այգիները անդադար ֆեֆ կ'ընէի .

Այնպէս որ մինչև հիմայ դեռ գըլուխըս մը պըտըտի»  
 — «Ե՛մ, ուրեմըն դուն . . .» — «Ես ամառն ի բուն  
 Խաղեր կանչեցի մէկ մէկէ սիրուն :»  
 — «Խաղ կանչեցիր հա՞, ատ ալ գէշ բան չէ,  
 Ուրեմն հիմակ ալ պարէ ու ցատքէ » :

Յախով

### 60. — Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Ն Ա Ղ Ո Ւ Է Ս

Օր մը ձին , շուն , եզն ու իշուկ  
 Մէկտեղ եկած կը խօսէին .  
 Նախ շունն ըսաւ «Երջանիկ դուք  
 Որ չէք մատնած անգութ բախտին .  
 Ահ , գիտնայիք ի՞նչ կը քաշեմ ,  
 Գիշերն արթուն պէտք է սպասեմ  
 Իմ տէրերուս պահպանութեան ,  
 Տորեկն երթամ փակուիմ զընտան ,  
 Յանցաւորի պէս կապկըպած ,  
 Այսչափ չարեաց ի՞նչ կարծէք վարձք .  
 Քանի մը հատ չորցած ոսկոր ,  
 Քիչ մ'ալ մըքլոտ հացի կըտոր » :  
 «Ատիկա բան չէ, եզն ըսաւ .  
 Դժբախտութիւնն ինձի ինկաւ .  
 Դու յոգնութիւն ի՞նչ է չիյտես ,  
 Աշխատութիւն՝ իմինըս տես .  
 Կանուխ ելլալ ու բոլոր օր

կամ սայլ քաշել կամ խիստ արօր .  
 Աս ալ հերիք չէ, կըռնակդ ալ  
 Սուր խթանի մը պէտք է տալ » :  
 Բայց դուն գոնէ ձմեռն հանդիստ  
 Ախտին մէջ ծոյլ կը նստիս՝  
 Ըսաւ ձին , ես բերանս սանձ  
 Ամառ ձըմեռ մարդ մը շալկած  
 Դաշտեր , ձորեր պէտք է երթամ ,  
 Պատերազմի մէջ ալ մըտնամ » :  
 «Փառքով մեռնելն ալ պարծանք է՝  
 Ո՛վ բարեկամ , էշը կ'ըսէ .  
 Իմ նեղութիւնս ինչպէս յայտնեմ .  
 Այս բաւական է որ ըսեմ՝  
 Թէ մէկուն բաղդն որ աւրբի  
 Ա՛լ բեռնակիր էշ կ'անուանի » :  
 Ասանկ գանգաւ ըրած ատեն  
 Ծերուկ աղուէս մ'անցաւ մօտէն .  
 Վարպե՛տ աղուէս , ըօին , եկուր ,  
 Սա թըշուառացս ձար մը ցըյուր » :  
 — «Թէ որ կ'ուզէք , ըսաւ աղուէսն՝  
 Որ օգտակար խրատ մը տամ ձեզ՝  
 Բաղդին ամէնքդ ալ գո՛հ եղիք՝  
 Որ ալ գէշին չի հանդիպիք » :

(Բազմավեպ)

61. — ՄԱՆԿԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ

1. Ա.Ռ.ԵՂ.ԾՈՒՍ.ԾԻՔ

Ի՞նչ է այն որ կեանքէն ծընանի ,  
Եւ սակայն ինքն է միշտ անկենդան .  
Բայց որուն է ծանօթ ընտանի ,  
Կուտայ լուռ և անխօս պատասխան :

Նվագ

Երբ ես գամ՝ տիրեմ դաշտեր ու սարեր ,  
Ոչ այլ ինչ , բայց զիս տեսնես ամէն դին ,  
Յերեկն իսկ պայծառ գիշերն է առեր .  
Բայց երբ կը շնչեն հովեր զայրագին ,  
Կը թըռչիմ կ'երթամ արագ կայծակէն ,  
Եւ շուտով պայծառ լոյս ու տիւ ծագեն :

Ելմ

Հուր կը ժայթքեմ , կը ցանեմ լոյս ,  
Եւ երբ գուամ՝ դողան լեռներ ,  
Զիս կը լըսեն , բայց չեն տեսներ ,  
Վա՛հ իմ որսիս կորա՛ւ անյոյս :

ՔՄՐԱՄՈՎ ՎԳՄԵՄՈՂ

2. Ա.Ս.Ռ.ԵՂ.ԾՈՒՍ.ԾԻՔ (charade)

Երկու եմ ես բաժին ,  
Առաջինն է պինդ ժայռ ,  
Երկրորդն ենք միասին  
Ես , դու և ամէն այր :  
Երկուքն ալ որ առնուս ,  
Անխայտ եմ և անլոյս  
Սենեակ մը անպատուհան ,  
Զեռակերտ չեմ մարդեան :

մկն — ամք

Կրկին կայ յիս մաս ,  
Գըտիր թէ կըրնաս ,  
Առաջինն է տուն  
Վերեւ ջրերուն ,  
Որսասէր երկրորդն  
Միջատ է կամ որդն .  
Բայց թէ միանան՝  
Տօն մ'են տարեկան :

Եւտո — տ — րտգ

3. Բ Ս Ռ Ս Խ Ս Վ (logogriphe)

Բենով շահարեր խորք մըն եւ երկրին ,  
 Գիմով թէ լսեն մարդիկ՝ կը բերկրին .  
 Զայով և հոյով՝ թէ որ միանան՝  
 Կը փընտռեն սիրով մարդիկ յամարան :  
 Ծայով եւ անդունդ անյատակ անյաւ ,  
 Պատեմ աշխարհներ անթիւ և անբաւ .  
 Կենով՝ կենդանի , ջէյով եւ ես բոյս ,  
 Սէյով մահարեր ճիւղ եւ անյոյս .  
 Անունս որ ուղեւ՝ հարցուր թէ ո՞վ եմ .  
 Կ'ըսեմ թէ անա ես հոս քու քով եմ :

Իսյ, 'իօ 'իսզ 'իսչ 'իսզ  
 իսզ 'իսչ 'իսչ 'իսզ 'իսչ

4. Անդրաստուոքիւն (Anagramme)

Անթեւ , անտոն և անշունչ՝  
 Թռչի ցամաք ու ծովեր .  
 Աչեր մարդկան անմըռունչ  
 Դիտեն պիտակ իր ճակտիկ .  
 Մէկուն դուժէ խիստ ցաւեր ,  
 Միւսին կուտայ աւետիք :

կարուչ

ԱԶԴ. — Փնջիկէն առաջ կարդացուելու յարմար գրքոյկն է ,  
 ի մէջ այլոց, Պալենց գրատան «Նոր Փնջակն» :

Յ Ա Ն Կ Ն Ի Թ Ո Յ

	Յառաջաբան . . . . .	3
1.	Հայր իմ . . . . .	7
2.	Մանուկը եւ Շերամբ . . . . .	9
3.	Հանարին . . . . .	10
4.	Մոյլը . . . . .	11
5.	Ծննդավայրի սեր . . . . .	12
6.	Խայտիսը եւ Անծեղը . . . . .	13
7.	Ս. Գրիգոր . . . . .	14
8.	Մասակ կապիկը , Կապիկն եւ ընկոյզն . . . . .	15
9.	Գողն եւ էօ . . . . .	17
10.	Խիղճը . . . . .	18
11.	Անճրեւոտ օր մը . . . . .	19
12.	Սալորեցին . . . . .	20
13.	Առիւծ եւ Մուկ . . . . .	21
14.	Շագանակները . . . . .	25
15.	Կորսուած ասանոցը . . . . .	26
16.	Բնագղում . . . . .	27
17.	Մայրը , զղան եւ Պարկերեհները . . . . .	29
18.	Միութիւն ընտանեաց մէջ . . . . .	30
19.	Աղուես եւ Խաղող . . . . .	
	Գարբիեչ Արեւայիս. Այվագեան	32
20.	Ագուան ու Աղուես . . . . .	34
	Հ. Գ. Վ. Հիւրմիսի	

21.	Ծիծեռնակները . . . . .	36
22.	Առջինեկը . . . . . Մ. Յովհաննէսեան	37
23.	Երկու նամբորդ . . . . . Հ. Բ. Բուշներեան	39
24.	Աղուեսն եւ Գորք . . . . .	41
25.	Ագահն եւ Հաւ . . . . .	
	Գաբրիէլ Արեւայիս. Այլագեան	42
26.	Առջին բոժիւնն . . . . . Հ. Բ. Բուշներեան	44
27.	Մայր իմ . . . . .	46
28.	Պզտիկ Փիլիմոնը . . . . .	47
29.	Օրոր . . . . . Մ. Յովհաննէսեան	49
30.	Օրիորդ Փափուկ . . . . .	50
31.	Մտաց արքնութիւն . . . . .	51
32.	Ծածանն եւ իր պզտիկները . . . . .	52
33.	Պատիւ դպրոցին մեջ . . . . .	54
34.	Պատուէրներ դպրոցի տոց . . . . . Ա. Փանոսեան	56
35.	Եզովբոսն եւ Կառավարիչը . . . . .	57
36.	Հայրն եւ որդին . . . . .	58
37.	Երկու եղբայրներ . . . . .	60
38.	Կաղնին եւ Եղեգն . . . . . Հ. Գ. Հիւրմիզեան	61
39.	Մայր եւ Տղայ . . . . .	63
40.	Ծիծեռնակներու բոյնն . . . . .	65
41.	Ասուած . . . . . Հ. Ղ. Աշիշան	66
42.	Աղուեսն եւ Այծ . . . . . Հ. Գ. Հիւրմիզեան	67
43.	Աւխասանոցի երգը . . . . .	70
44.	Կամփ ոյժ, — Էտիսըն . . . . .	72
45.	Կովը . . . . .	74
46.	Կտակ երկրագործին . . . . . Հ. Բ. Բուշներեան	76
48.	Գեղձն եւ Ուռեցին . . . . .	78
48.	Գեղացի եւ օձ . . . . . Հ. Բ. Բուշներեան	79

49.	Սուլիչը . . . . .	80
50.	Պարկեճուրիւն . . . . .	82
51.	Երկու նկարիչներ . . . . .	83
52.	Գրութիւն . . . . .	84
53.	Տգեղ աղջկան մը գեղեցիկ խորհրդածութիւններն	86
54.	Մեծ մօրս իրիկը . . . . .	88
55.	Կօշիկները . . . . .	90
56.	Երգ Գեղջկական . . . . .	91
57.	Կարօն կամ պատճուած ստախօսք . . . . .	92
58.	Ագուարը . . . . .	93
59.	Ճպուռն եւ Մրջիւն . . . . .	95
60.	Իմաստուն աղուես . . . . .	96
61.	Մանկական զբօսանք . . . . .	98



20634

2013

52

Տպարան, Վիմագրատուն և կազմատուն. Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ  
27 Ֆինճանճըլար, Կ. Պոլիս:

Գին 3 Ղրբ.

معارف نظارت جلیه سی و مطبوعات اداره بهیسی رخصتیه طبع و نشر  
اولمشر فی ۱۲ تموز سنه ۱۳۱۸